№ 66 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 26 ՄԱՐՏԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 26 ՄԱՐՏԻ № 66

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—58.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՊԱՊԻՐՈՍՆԵՐ ԳԱԼԼԻԱ „ԿՈՄԷՏԱ" ԸՆԿ.
— ԹԻՖԼԻՍՈՒՄ: —
25 հատը—15 կոպ., 10 հատը—6 կոպ. (Ն. ու.) 986. 0—26

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎՃԱՐԸ 8 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и Ко, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» և հայ կինը» և 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ.

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ
Երեքշաբթի, մարտի 26-ին, կը կայանայ
1500-ԱՄԵԱՅ ՑԻՇԱՏԱԿԻՆ ՀԻՄՆՎԱԾ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՕԳՏԻՆ
Դասախօսութիւն ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԷՔԵՐՋԵԱՆԻ
ՆԻՒԹԸ ՆՈՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ
Նոր հոգեբանութեան պատմութիւնը. «Ես»-ը. Կառավարող ուժը մարդու մէջ. «Գիտակցական» և «Ենթագիտակցական» մտքի ֆունկցիաները. Հիպնոտիզմ. Ներշնչում. Ինքնաներշնչում. Ներշնչական և մտաւոր դարմանում. Յարատև փափագի ուժը. Կենտրոնացման ուժը. Կամքի ուժը. Դրական և բացասական մտաւոր դրութիւններ. Հաւատի ուժը.
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին. Տեղերի գները 1 ր. 50 կոպ. և 25 կոպ.
Տոմսակները կը վաճառվեն դասախօսի բնակարանում, Гановская ул. 22 և երեկոյեան ժամը 6-ից սկսած Ընկերութեան դահլիճում.
առ. 239. 1—1

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ ՈՒՐԲԱԹ, ապրիլի 5-ին կը կայանայ
ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԵԿՈՅ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ
անուան, որի արդիւնքը յատկացված է նրա մահարձանին.
Մասնակցում են՝ պ. պ. Յ. Թումանեան, Միրզաեան, աշուղ Հազրին իր խմբով և աշակերտներով, սազանդարներ Գրիգոր, Սևի և ուրիշներ.
✦ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՐԵՐ ՀԻՆ ԹԻՖԼԻՍԻ ԶԳԵՍՏՆԵՐՈՎ ✦
Բեմը կը զարդարէ արևելեան ճաշակով նկարիչ Գ. Բաշինջաղեանը.
Վարչութիւնը խնդրում է հասարակութեան՝ ով կարող է շնորհ բերի երեկոյթին ԹԻՖԼԻՍԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՎ.
Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին:
Տեղերի գները 3 ր. մինչև 1 ր., աշակերտների համար 55 կոպ.
Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Թիֆլիսի Ժողովարանում և պ. Ն. Մատուրեանի խանութում.
Երեկոյթի կառավարչուհի՝ Իշխ. Մ. ԹՈՒՄԱՆԵԱՆ
առ. (26,30,2,5) 229. 5—2

ՇՈՒՇԻ—ԵՒԼԱԽ ՊՈՍՏԱՅԻՆ ՏՐԱԿՏԸ
նորից անցաւ Լ. ՎԱՐԱԶԵԱՆԻ կարգադրութեան տակը. Ձեռք են առնված խիստ միջոցներ՝ կատարել երթևեկութիւնը առանց ուշացնելու կայարաններում. Ծառայողների կազմը նորոգված է քաղաքավարի և կարգապահ մարդկանցով. Պատրաստված են կայարաններում հանգստանալու և ճաշելու համար մաքուր և յարմար սենեակներ, իսկ Եւլախ, Աղդամ, Խօջալու կայարաններում գիշերել ցանկացողների համար պատրաստված են ձրի և կահաւորված տաք սենեակներ.
Փակ կառքերի, ամէն տեսակ բաց կոլեասկաների և դիլիժանսների համար, նաև առանձին տեղերի համար դիլիժանսներում, պատուէրները ընդունվում են նամակներով և հեռագիրներով օր առաջ և պատրաստ տրվում են կառքերը գնացքները վօկզալ հասած րոպէին. Առանձին տեղի գինը մի մարդու համար դիլիժանսում, առ այժմ, Շուշում 3 ր., Եւլախում 4 ր.. Հասցէն՝ Евлахъ, Контора почтовой станціи.
(Օ. Մ.) առ. 179. 15—9

Երդ.-հաւատարմատար
ԱՂԷՔ. ՊԱՊՈՎԵԱՆԸ
ՏԵՂԱՓՈԽՎԵՑ Вознесенская 9, տուն Ղալամքարեանի.
առ. 238. 5—2

ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ՌԱԴԻՈՒ պրեպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԷՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ.
Ընդունելութիւնը ամէն օր, առաւօտեան ժամը 9--1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը.
Չքաւորներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար.
Սօլոլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Դանովսկայա). Հեռախօս 7—92.
(Ա.Օ.) առ. 92. 100—38

ԲԺԻՇԿ
ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ
Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամէն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը.
Հասցէն՝ Բարիչէվսկայա № 1.
առ. (Կ. Ե. Ն.) 4. 100—34

ԲԺԻՇԿ
Ց. Մելիք-Նուբարեան
ներքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս թոքերի.
Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնևմատօրակսով.
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամէն օր (առաւօտեան 12—1 ժ.
(երեկոյեան 5—7 ժ.
Սօլոլակ, Բարիչէվսկայա 10 (Լերմոնտովսկ. դեղատան դիմացը).
(Ն. Հ. Կ.) առ. 746. 100—72

ՕԳՏՎԵՆՔ ԱՌԻԹԻՑ

Կայ արդեօք հայ ճարտարապետական գեղարուեստ թէ ոչ։

— Չը կայ,— ասում են նրանք, որոնք պնդում են, թէ հայը ամէն բան փոխ է առել Բիւզանդիոնից, Ասորիքից, Արաբիայից, Պարսկաստանից։

— Կայ,— ասում են միւսները,— և նրա ապացոյցները դուք տեսնում էք Անիում, Վայոց Ձորում, Աբարանում, Սիւնիքում։

Վէճը նոր չէ։

Եւ այդ վէճի հետաքրքրութիւնը չէ պակասել ժամանակի ընթացքում։

Միայն թէ վէճի բնաւորութիւնը բարեփոխվում է աւելի ու աւելի դէպի այն կողմը, որը պնդում է, թէ կայ հայ ազգային ճարտարապետական գեղարուեստ։

Նիւթերը տարէ-տարի ճոխանում են և նոր ապացոյցներ են ամբարում վկայելու, որ հայ մարդը կարողացել է իր ուրոյն ճաշակով զարգացնել ճարտարապետական գեղարուեստի այս ու այն ճիւղաւորութիւնը։

Կան՝ եւրոպական մասնագէտներ, որոնք ուշադրութիւն են դարձրել հայկական ճարտարապետութեան վրա և գտել են շատ գնահատելի տարրեր և արժէքներ նրա մէջ. Նշանաւոր մասնագէտ Ստրժիգովսկին յատկացրեց պատւաւոր տեղ հայ ճարտարապետութեան համար։

Ակադեմիկոս Մառը, պրոֆեսոր Պրախով, մի շարք գիտնականներ, նկարիչներ (Թեթվաճեան, Սուրէնեան և ուրիշներ) և ճարտարապետներ, ուսումնասիրելով հայ անցեալը զանազան տեսակէտներով՝ պարզաբանեցին ճարտարապետական գեղարուեստի հարըստութիւնները հայութեան թողած կառուցուածքների մէջ։

Իսկ այն, ինչ որ արեց հայ ճարտարապետ Թորամանեանը, մի կուլտուրական աչքի ընկնող փորձ էր, որը սակայն մնում է մինչև այժմ առանց արժանի պաշտպանութեան և աջակցութեան։ Թորամանեանը փորձեց շունչ փչել եղած նիւթին և բազմաթիւ բեկորներից վերստեղծել կորած հոյակապութիւնները։ Նա համակարգեց ցիրուցան գծերը՝ ամբողջութիւններ վերարտադրելու համար։ Նրա արած գործը կարող էր գիտական մեծ արժէք շահել, եթէ մեր հասարակութեան մէջ աւելի դիւրազգացութիւն տեսնվէր դէպի հայ գեղարուեստի գնահատութեան գործը։

Ներկայումս մի լաւ առիթ կայ հայ ճարտարապետական գեղարուեստի խընդիրների աւելի ընդարձակ լուսաբանութեան և գիտական գնահատութեան համար։ Վիէննայում այս օրերս բացվում է ակադեմիական մի ցուցահանդէս, որտեղ հայ ճարտարապետութիւնը հրաւիրված է մասնակցելու։

Որքան գեղեցիկ գործ կը լինէր, եթէ աջողվէր գրաւել մասնագէտների դէպի այդ ցուցահանդէսը և նիւթեր ու ուսումնասիրութիւններ ներկայացնել հայ գեղարուեստի վերաբերութեամբ։ Ինչու դիւրութիւններ չը տրվեն, օրինակ, Թորամանեանին, գնալու ակադեմիական այդ հանդիսին և ցոյց հանելու երկարամեայ աշխատանքի արդիւնքը։

Եթէ մեր հասարակութիւնը շատ բան չէ կարողանում անել իր անմիջական աշխատանքով և կազմակերպութիւններով, գոնէ աջակից հանդիսանայ այն բոլոր մարդկանց և հիմնարկութիւններին, որոնք յանձն կառնէին աւելի եռանդուն և անմիջական մասնակցութեամբ գործակցել գեղեցիկ նպատակի համար։

Ա. Քալանթար

ՓՈԽԱՐՔԱՅԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Լոյս մարտի 24-ի գիշերը Նորին Պայծառափայլութիւնը քնեց մօտ 7 ժամ։ Տաքութիւնը 36 էր, զարկերակը 64 մի րոպէում, շնչառութիւնը 26—30 մի րոպէում։

Լոյս մարտի 25-ի գիշերը կոմսը քնեց մօտ հինգ ժամ ընդմիջումներով։ Ձայնը պարզվում է։ Տաքութիւնը 36,4, զարկերակը 60 մի րոպէում, շնչառութիւնը 26—30 մի րոպէում։

Անդրկովկասի մուֆթին մարտի 22-ին երկրորդ անգամ մաղթանք կատարեց մզկիթում Կովկասի փոխարքայի առողջութեան համար։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
23 և 23 մարտի

Պետերբուրգ.—Միացեալ սլաւօնական ընկերութիւնների նախաձեռնութեամբ՝ սլաւօններին համակրական հսկայական ցոյցեր տեղի ունեցան։ Ցերեկվայ ժամը 2-ի մօտերը Կազանի տաճարում կատարվեց հոգեհանգիստ բալկանեան պատերազմում ընկածների յիշատակին։ Տաճարը լի էր աղօթողներով, առաւելապէս զինուորականներով և աշակերտութեամբ, Խորհրդի և Դումայի անդամներով, հասարակական գործիչներով։ Ժամը 3-ին, ահագին ամբոխը դիմեց Կազանի տաճարի մօտից դէպի Ցարութեան տաճարը, ուր նոյնպէս պատարագ էր մատուցվում։ Տասնեակ ազգային դրօշակներ և ահագին պլակատներ «Սկիւտարը Չերնոգորիային», «Խաչ Այա-Սոֆիայի վրա» մակագրութիւններով տարածվում էին մարդկային գլուխների վրայով։ Երբ բացեց սլաւօնական ընկերութիւնների պատգամաւորութիւնը, որ տանում էր մի խոշոր պսակ, մակագրութեամբ՝ «Ալէքսանդր III Կայսրին, որ Չերնոգորիան ճանաչեց Ռուսաստանի միակ բարեկամը»։ Գլխաբաց և ռուսական օրհներգը երգելով ցուցարարները մօտեցան Ցարութեան տաճարին, ուր միացան ուրիշ ամբոխի հետ, որ նոյնպէս դրօշակներով ու սպիտակ ծաղիկներից մի մեծ խաչով էր։ Միանալով, ամբոխը ռուսական և բուլղարական ազգային օրհներգի երգեցողութեամբ և խլացուցիչ «ուռա» բացականչելով շարժվեց դէպի Պետրոս-Պօղոսի բերդը։ Պատգամաւորութիւնը մտաւ բերդը և պսակ դրեց Ալէքսանդր III-ի դամբարանի և ծաղկեայ խաչ՝ Ալէքսանդր II-ի գերեզմանի վրա, որից յետոյ կատարվեց հոգոց։ Ցուցարարների մի մասը ցրվեց, մի մասը, թւով 3000 մարդ, վերադարձին երգեցողութեամբ ժամը 5-ին մօտեցաւ բուլղարական միսսիային, ուր ցոյց արաւ, յետոյ հանելով Լիտէյնի հրապարակը՝ աղմկալի ցոյց կազմեց սերբիական միսսիայի առաջ։ Երբ ամբոխը վերադառնում էր դէպի Կազանի տաճարը, նրան միացան հասարակական խաւերի տականքներ և փորձեցին սուլել ցոյց անելու արտաքին գործերի մինիստրութեան և աւստրիական ու գերմանական դեսպանների առաջ։ Ոստիկանութիւնը թոյլ չը տուեց։ Առհասարակ ցոյցը անցաւ առանց էկսցէսների, կարգ ու կանոնը ոչ մի տեղ չը խախտվեց։

Բեռլին.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ սկսած ամառային սեմեստրից՝ Լայպցիգի համալսարանը կընդունվեն ռուսական գիմնազիաները աւարտած անձերից միայն նրանք, որոնք մի ամբողջ տարի ունկնդրել են ռուսական համալսարաններում։

Կահիրէ.—Լրագիրների առելով, Քեամիլ-փաշան, Թիւրքիայի կրիտիկական դրութիւնը աչքի առաջ ունենալով, համաձայն սուլթանի ցանկութեան, պատրաստակամութիւն է յայտնել վերադառնալ իշխանութեան։

Վիէննա.—«Ֆրեմդէնբլատը» հաղորդում է. «Նկատի առնելով այն լուրերը, թէ դուքս Մօնրէանսիէն իբր թէ ստանձնէ ալբանական գահը, մենք հեղինակաւոր աղբիւրից տեղեկացանք, որ աւստրօ-ունգարական և իտալական կառավարութիւնները մտադիր չեն ընդունել ու պաշտպանել դքսի թեկնածութիւնը»։

Աթէնք.—Երէկ թագաւորը ընդունեց Նէվսկի հետևակ գնդի պատգամաւորութիւնը, որ եկել էր Գէորգ թագաւորի թաղմանը։

Կառավարութիւնը վճռեց գումարել պալատը նոր թագաւորի տարեկան ռոճիկի ու այրի թագուհու պալատի պահպանութեան գումարները որոշելու համար։ Կոնստանտին թագաւորի թագադրութիւնը տեղի կունենայ մի տարի յետոյ։

Երէկ մեկնեց Մեծ Իշխան Դմիտրի Կոնստանտինովիչը։

Սալէս.—Կառավարութիւնը արգելեց երեք ամիս շարունակ զարդարել դրօշակներով ու լուսավառել տները։ Շարժառիթը այն է, որ ազգաբնակութիւնը պատրաստվում է տօնել Սկիւտարի սպասվող անկումը։

Պորտ-Սայիդ.—Եկաւ «Համիդիէն»։

Բուխարէստ.—Վախճանվեց (?) նախագահ Կանտակուզէնը։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՍԿԻՒՏԱՐԻ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
23 և 24 մարտի

Ցէտինիէ.—Միջազգային նաւատորմը երևաց Անտիվարիի առաջ։

Կառավարութիւնը յանձնեց մեծ պետութիւնների ներկայացուցիչներին պատասխան նոտա, նման մնացած դաշնակիցների պատասխանին։

Աթէնք. — Դաշնակից կառավարութիւնների պատասխանը յանձնվեց կէսօրին։

«Կինգ-Էդուարդ» և «Էդգար-Կինէ» նաւերը երէկ մեկնեցին Կորֆու՝ Չերնոգորիայի ափը գնալու համար։ Գիշերով այնտեղ դիմեց և «Եարմուտ» յածանաւը։

Վիէննա.—Լրագիրները գոհունակութիւն են յայտնում չերնոգորական ծովափը իսկապէս գրաւելու առիթով։

Արտաքին գործերի մինիստր Սազօնովի Սկիւտարի վիճակի մասին Դումայի անդամներին յայտնած բացատրութիւնների առիթով «Նէյէս Վինէր-Տագէբլատը» ասում է. «Մենք ողջունում ենք Սազօնովի յայտարարութիւնը։ Այդ մտցնում է հանգստութիւն, որովհետև պարզ է, որ ռուս կառավարութիւնը, չը նայած երկրի յուզված տրամադրութեան, կողմնակից է մեծ պետութիւնների միահամուռ վճիռներին»։ «Նէյէ- Ֆրէյէ- Պրեսսէն» Սազօնովի յայտարարութիւնը անուանում է խաղաղութեան քաղաքականութեան մեծ յաղթութիւն։ Սազօնովը յաղթութիւնը տարաւ պաշտօնական և ոչ պաշտօնական Ռուսաստանի պայքարի միջև։ «Րէյխս-Պոստը» ասում է. «Սազօնովը աշխատում է պահել ռուսաց քաղաքանութեան կորէկտութեան տպաւորութիւնը և խուսափում է արկածախնդրութիւններից։ Սազօնովի յաղթութեան դէպքում եւրոպական խաղաղութիւնը, յամենայն դէպս մօտիկ ապագայում, կը յաղթահարէ մեծամեծ դժուարութիւնների»։

Մինիստր-նախագահը յայտնեց պալատի նախագահին, որ հանգստացուցիչ տարրը արտաքին կացութեան մէջ կայանում է նրանում, որ Աւստրո-Ունգարիան ընթանում է բոլորից առաջ։

Վիէննա.—«Կոր. Բիւրօն» հաղորդում է. «Անգլիական փոխ-ծովակալը, իբրև աւագագոյնը պաշտօնեաներից և իբրև միջազգային նաւատորմի հրամանատար, Կատտարօյից հեռագրեց մարտի 23 ին, հաղորդելով նաւատորմի գալուստի և գալստեան շարժառիթների մասին և պահանջելով, որպէսզի Չեռնօգորիան անյապաղ պատրաստակամութիւն յայտնէ, թէ հնազանդվում է մեծ պետութիւններին»։

Աւստրօ-ունգարական լրագիրների մեծամասնութիւնը գտնում է ծովային ցոյցը աննպատակ։

—

Բելգրադ.—Սերբիական կառավարութիւնը պատասխանեց մեծ պետութիւնների մարտի 16 ի առաջարկութեանը. «Որովհետև հաշտութիւնը դեռ չէ կնքված Թիւրքիայի հետ և օսմանեան զօրքերը կռւում են դաշնակիցների հետ, սերբիական կառավարութիւնը չէ կարող յետ կանչել իր զօրքերը Սկիւտարի մօտից այդ բերդի անձնատուր լինելուց և հաշտութիւն կայացնելուց առաջ։ Կաթօլիկների և մահմեդական-ալբանների պաշտպանութեան համար ձեռք առնվելիք միջոցների վերաբերութեամբ թագաւորական կառավարութիւնը չէ կարող թոյլ տալ օտարազգի միջամտութիւն երկրի ներքին գործերին»։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
23 և 24 մարտի

Կ. Պօլիս.—Զմիւռնիայի վալին տեղեկացնում է. «Երէկ յունական մի ականաւոր ռմբակոծեց Վուրլան։ Բերդերը պատասխանեցին։ Ականաւորը հեռացաւ»։

Չաթալջայում դրութիւնը անփոփոխ է։ Բոլգարները կենտրոնացնում են Սինէկլիի և Չերքէզ-քէօյի միջև 35,000 զինւոր։ Ադրիանուպօլսից բերել են չորս դաշտային հրետանի։ Սինէկլիում կայարան և աէրօպլանների կայան է կառուցված։

—

Սօֆիա.—Մինիստրների խորհրդի նախագահութեամբ Օպրինում վերջնականապէս մշակվելու է այն պատասխանը, որ ուղարկվելու է մեծ պետութիւնների նօտային հաշտութիւն կնքելու պայմանների վերաբերութեամբ։ Մօտիկ օրերս Թագաւորը մեկնում է գործող բանակը։

Օդրինից բերին 441 թիւրք գերի օֆիցէրի և կէսօրին ներկայացրին քաղաքապահ զօրքի հրամանատարին։ Բազմահազար ամբոխը սպասում էր գերիներին կայարանում։ Ոչ մի թշնամական ցոյց չեղաւ։ Հրամանատարին ներկայանալուց յետոյ գերի օֆիցէրներին տեղաւորեցին քաղաքի ամենալաւ հիւրանոցներում։

Կառավարութիւնը մեծ պետութիւնների ներկայացուցիչներին յանձնեց իր պատասխանը հաշտութեան հիմնական պայմանների վերաբերութեամբ։

—

Սօֆիա. — Մեծ պետութիւնների դեսպանները յանձնեցին Գեշօվին այն առաջարկագիրը, որով առաջարկվում է դաշնակիցներին համաձայնել Էնոս-Միդիա գիծը իբրև թիւրք-բոլգարական սահման. բոլոր ֆինանսական խնդիրները քննվելու են Պարիզում՝ կռւող կողմերի պատգամաւորների մասնակցութեամբ։ Գեշօվը շնորհակալութիւն յայտնեց և ասաց, որ նախ պէտք է յարաբերութիւն սկսէ դաշնակիցների հետ։

—

Բելգրադ.—Սերբիական կառավարութիւնը մեծ պետութիւններին յանձնեց իր պատասխանը միջնորդութեան առաջարկութեան դիմաց։ Դաշնակից պետութիւնները պատրաստ են ընդունել միջնորդութիւնը հետևեալ պայմաններով։ Էնոս-Միդիա գիծը պէտք է ծառայէ սոսկ պայմանակէտ, և ոչ թէ սահմանաչափ վերջնական գիծ. Եգէյեան կղզիները պէտք է Թիւրքիան զիջէ դաշնակիցներին. դաշնակիցները պէտք է վաղօրօք իրազեկ եղած լինեն Ալբանիայի սահմանների մասին, որոնք, ինչպէս նրանք յոյս ունեն, կը համապատասխանեն Լօնդօնի վեհաժողովում առաջարկված սահմաններին. դաշնակիցները պահանջում են, որպէսզի մեծ պետութիւնները սկզբունքով ընդունեն պատերազմական վարձահատուցման իրաւունքը։ Պատերազմական գործողութիւնները կը դադարեն սոսկ հաշտութեան պայմանագրի յիշեալ հիմունքները ընդունվելուց յետոյ։

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԷՊՔԵՐԸ

(ԼՐԱԲԵՐԻ ՄԸ ՑՈՒՑԱՏԵՏՐԸ)

—•—

(Սեփ. Թղթակցէն)

Անկում Էդիրնէի.—Սրտաբեկութիւն ի Կ. Պօլիս.—Անապահովութիւն.—Կ. Պօլիս վտանգի տակ։

Կ. Պօլիս, 14 մարտ

Այսօր հաւատարօրէն գիտենք, թէ Էդիրնէ ինկած է, սակայն տակաւին լրագրութեան չարտօնուիր գրել այս մասին։ Սակայն լրագիրներու տեղեկատւութեան իսկ պէտք չմնաց։ Ամեն մարդ արդէն տեղեկացաւ, և մարդ չմնաց, որ չգիտնար, թէ Էդիրնէ ինկած է։

Օտար դեսպանատուններ հաղորդեցին այս լուրը բոլոր իրենց ծանօթներուն, կառավարական պաշտօնեաներ իրենց մտերիմներուն պաշտօնական տեղեկութիւնները հաղորդեցին և բերնէ-բերան լուրը տարածուեցաւ։

Ֆիլիպէի մէջ ներկայացուցիչ ունեցող առևտրական շատ մը տուներ, որոնք Էդիրնէով ալ շահագրգռուած են, արդէն վաղուց հեռագրական բանաձև մը պատրաստած էին Էդիրնէի անկումը հաղորդելու համար Կ. Պօլիս։ Անոնք ալ եկան։

Այնպէս որ՝ Էդիրնէի անկումը ամեն տարակոյսէ և կասկածէ զերծ է։

Էդիրնէն՝ պատերազմի առաջին օրերէն մինչև այսօր այն միակ յենակէտն էր, որուն կախուած էր օսմ. դիւանագիտութիւնը։ Քեամիլ-փաշայի կաբինէտը զայն շահագործեց և զայն պատուով ազատելու աշխատեցաւ։ Ի վերջոյ տրամադիր էր զայն զոհելու, առանց սակայն պարտութեան մատնելու։ Մահմուդ-Շէվքէթ-փաշայի դահլիճը, որ նուաստութիւն կը համարէր չորրապետուած քաղաք մը թշնամիին յանձնել և ազգային դաւաճան կը հռչակէր Քեամիլ-փաշան, ուզեց Էդիրնէի անձնատուութենէն առաջ հաշտութիւնը կնքել և Էդիրնէի դիմադրութիւնը ի նպաստ օսմ. պետութեան ծառայեցնել։ Սակայն «Ֆէլէկ Մուսթաֆայա խար ըլմաղը» (բաղդը Մուսթաֆային չծառայեց), ինչպէս կըսէ թիւրքական առածը, և այսօր Մահմուդ-Շէվքէթ-փաշայի դահլիճը Էդիրնէն իբր ճառակի քար գործածելու առիթը մի անգամ ընդ միշտ կորսուած է։

Իթթիհադական և ոչ-իթթիհադական բոլոր թիւրքերը կատարեալ սրտաբեկութեան մը մատնուած են, և Կ. Պօլսոյ մէջ մահաշունչ ու տխուր վիճակ մը կը տիրէ։ Իթթիհադականները ամօթապարտ ու իրենց մեծ սխալին առջև սարսափած՝ կը սպասեն ժողովրդային ապստամբութեան մը։

Վերջին անգամ թիւրք գաւառներէն մի քանիին տուներէն գտնուած ռմբաններ ցոյց կուտան, թէ արդէն թիւրքական որոշ շրջանակներու մէջ միտում կայ յեղափոխական շարժում մը առաջ բերելու։

Էդիրնէի անկման առաջին տպաւորութիւնը կառավարութիւնը կենթադրէ յարմարագոյն առիթ մը այս տեսակ յեղափոխութիւն մը առաջ բերելու համար, ուստի ամենախիստ հսկողութիւն ի գործ կը դնէ պետական պաշտօնատուններու շուրջը։ Բ. Դուռնէն ներս մտնել դժուարացած է։

Ոստիկաններ խուզարկելիս ներս մտնող կը հարցաքննեն և մինչև որ ապահով չըլլան և չհասկնան անոր ուր երթալը, չեն թողուր։ Նոյնիսկ պետական պաշտօնեաներ ծրարով չեն կրնար երթալ իրենց պաշտօնատուները, առանց իրենց ծրարը քննել տալու։

Էդիրնէի անկումը բնական է թէ բուլղարները աւելի պահանջկոտ պիտի դարձնէ, և Քեամիլ-փաշայի դահլիճին խոստացուած Էդիրնէ նահանգին համար բացառիկ ռէժիմի մը և խալաֆական իրաւանց համար յատուկ ապահովութիւններու խօսքը չի կրնար ըլլալ։ Նոյնպէս բուլղարներու կողմէ իսլամ հիւանդանոցներու և մզկիթներու անվթար պահպանութեան համար տրուած խոստումը ինքնին ջնջուած է, և թերևս այս պահուս իսկ Էդիրնէի ամենէն հոյակապ մզկիթները եկեղեցիներու վերածուած են։

Էդիրնէի անկումը դարձեալ շատ քաջալերական է զինակից պետութեանց համար, որոնք այս անգամ փոխարինութիւն մը չունին ստանալիք իրենց գրաւած հողաբաժիններէն մէկ մասը վերադարձնելու համար Թիւրքիոյ։

Որքան ատեն որ Էդիրնէ չէր ինկած, Թիւրքիա Էդիրնէն թողլով Էնոս-Միդիա գիծը իբր սահմանագլուխ կուզէր ընդունիլ տալ, վերադարձուած երկիրներուն փոխարէն համարելով անշուշտ չորրապետուած Էդիրնէն։

Հիմա որ Էդիրնէն զէնքով առնուեցաւ, այլ ևս շնորհ մը չէ, այլ իրաւունք մը։ Հետևաբար շատ հաւանական է, որ Բուլղարիա պնդէ Միդիա-Ռոդօսթօ գիծին վրայ, որ եթէ ընդունուի՝ Կ. Պօլսոյ անձնատուութիւնը կը նշանակէ։

Էդիրնէի անձնատուութիւնը նաև մեծապէս ու վճռական ազդեցութիւն կրնայ ունենալ պատերազմին ամբողջ ճակատագրին վրայ։ Էդիրնէ պաշարող ստուար ուժերէն առնուազն 80,000 լաւագոյն ու կռուող բուլղար զինուորներ պիտի գան ստուարացնել բուլղարական գիծերը ի Չաթալջա։

Եանեայի անձնատուութենէ յետոյ տրամադրելի մնացած 30,000 հելլէն զինուորներ ալ արդէն կը բերուին, որով 110,000 նոր զինուորներ պիտի զօրացնեն Կ. Պօլսոյ վրայ քալող բանակը։

Արդէն քանի օրէ ի վեր կատաղի ճակատամարտ մը տեղի կունենայ ի Չաթալջա։ Յունուար 10-էն յետոյ, երբ զինադադարը խզուելով նորէն պատերազմի ձեռնարկուեցաւ, բուլղար բանակը ռազմագիտական հաշուով մը ետ քաշուեցաւ։

Չաթալջա քաղաքը, որ բուլղարաց ձեռքն էր, դարձեալ թիւրքերուն անցաւ, և թիւրքերը Չաթալջայի ամրութիւններէն դուրս բաւական տեղ առաջացան առանց ընդդիմութեան։

Այս ընկրկումը թիւրքերը մեծապէս ուրախացուց, և կարծեցին, թէ բուլղար բանակին մէկ տկարութեան նշանն էր։

Վերջին մէկ երկու օրերու մէջ բուլղարները դարձեալ եկած են Չաթալջայի ամրութեանց առջև և կըսուի թէ յաջող յարձակումներ ըրած են։

Չաթալջայի ճակատամարտի միջոցին 20 հազարէն աւելի կորուստ ունեցած են թիւրքերը։

Վիրաւորեալներու անծայր կարաւաններ Կ. Պօլիս կը բերուին շարունակ։

Հաշտութենէն յետոյ Չաթալջա համախմբուած զինուորները հակաիթթիհադական օֆիցէրներուն հրամանին տակ մայրաքաղաք խուժելն արգիլելու, և կառավարութիւնը տապալելու համար անոնց կողմէ ունէ ձեռնարկ արգիլելու մտադրութեամբ, ասկէ առաջ գրուած էր, որ Ս.-Սթէֆանօյի և Մաքրի-գիւղի շրջանակին մէջ Էնվէրի հրամանատարութեան տակ 25—30,000 զինուոր համախմբուած է։ Չաթալջայի ճակատամարտին առած յոռի ընթացքը և այդ գիծերուն անպաշտպանելի վիճակի հասած կամ տկարացած ըլլալը կը հաստատուի սա պարագայէն, որ այդ զինուորները յանկարծական կերպով հապճեպով ղրկուած են Չաթալջա՝ օգնութեան հասնելու համար թիւրք բանակին։

Կ. Պօլիս հիմա թափուր է զինուորական ուժէ։ Անատօլուէն նոր զինուորներ կը բերուին պակասները լրացնելու համար, սակայն որովհետև բերուած զինուորները արդէն վատոյժ և ապիկար բաներ են, յուսահատութիւնը ընդհանուր է և ամեն մարդ վտանգի նախանշանները կը զգայ մայրաքաղաքին մէջ։

Եթէ Չաթալջայի մէջ բանակը պարտութեան մատնուի և բուլղար զինուորները այդ վերջին շղթան ալ խորտակելու յաջողին, Կ. Պօլիս բուլղար բանակներու առջև բաց է։

Թիւրքերը այս վիճակին գիտակցութիւնը ունին։

Հիմա անձկութեամբ հաշտութեան կը սպասեն, սակայն դաշնակիցները չեն աճապարեր, թերևս Կ. Պօլսոյ մէջ կնքելու համար հաշտութիւնը։

Այս վիճակը առաջ բերած է Կ. Պօլսոյ մէջ անսովոր դրութիւն մը, երկիւղալի վիճակ մը։

Լրջօրէն Կ. Պօլիս վտանգի տակ է և ոչ մէկ արգելք կրնայ կասեցնել թշնամի բանակները։ Այս կեղակարծ ու յանկարծական անկումը, որուն մատնուեցաւ երկիրը, և բանակին քայքայումը ոչ միայն յուսահատութեան մատնեցին ժողովուրդը, այլ և շփոթութեան ու շուարումի մատնեցին կառավարութիւնը։

Այլևս ղեկը կորսուած է և կառավարութիւն գոյութիւն չունի երկրին մէջ։

Մահմուդ Շէվքէթ-փաշայի դահլիճը չի գիտեր թէ ինչ ընէ։ Մասնաւորապէս իր դերը անոր համար դժուարացած է, որ ժողովուրդն ալ իր հետ չէ, և ինքզինքն ու իր գործերն ալ արդարացնելու միջոց պարտաւորուած է։

Ահա, Էդիրնէ գրաւուած է և սակայն կառավարութիւնը կը վարանի ճակատաբաց ըսելու, թէ Էդիրնէ ինկած է։

Այս պայմաններուն մէջ երկիրը վարելն իրապէս շատ դժուար է. սակայն ասոր համար ոչ ոք իրաւունք ունի մէկէն զանգատելու։

«Քննոյի դիւշէն աղլամազ»։

Հայորդի

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 18 մարտի

Միանդաբում Դարալագ գիւղի հայ գիւղացիների ցրիւ գալը, գիւղատէր Հաջի Ելխանիի անասելի կեղեքումներից ու ճնշումներից, գրել եմ իր ժամանակին «Մշակում»։

Դարալագ գիւղի հայ բնակչութիւնը 2—300 տարվայ պատմութիւն ունի. երբեմն 100 անից աւել են եղել հայերը և ունեցել են փոքր ի շատէ բարեկեցիկ վիճակ, երբ նախկին գիւղատէրերը բարեգթական վերաբերմունք են ցոյց տուել աշխատասէր գիւղացուն։ Գիւղի մի ժամանակ բազմահայ լինելուն կենդանի վկայ է այսօրվայ ընդարձակ հանգստարանը և եկեղեցին, որը կառուցվել է 200 տարի առաջ։ Ժամանակի ընթացքում հարստահարութիւնից և չքաւորութիւնից գիւղի հայ ժողովուրդը հետզհետէ պակասելով, մնացին 20—25 տուն միայն, երբ գիւղը սեփականութիւն դարձաւ Հաջի Ելխանի ցեղապետին, որ բարբարոս գիւղատէրերի մէջ գերակշիռը կարելի է համարւել։

Նախանցեալ տարիները Հաջի Ելխանին կռիւ ունէր մի այլ զօրեղ ցեղապետ՝ Կադր աղայի որդիների հետ. Հաջի Ելխանի սաստիկ պահանջեց Դարալագի հայերից, որ իրանց՝ հայ գիւղացիների հաշւով զէնք առնեն և քիւրդ ձիաւորների հետ մասնակցեն կռւին։ Բնական էր, որ հայերը մերժէին մի այդպիսի առաջարկ. և այս վերջին հանգամանքը գիւղատէրը առիթ բռնելով գիւղից արտաքսեց հայերին՝ յափշտակելով բոլոր նրանց սեփականութիւնը՝ անշարժ թէ շարժական։ 20—25 տուն ընչազուրկ գիւղացիները ապաստանեցին Սուլդուզ, մի մասը Միանդաբի Ազա գիւղը, որոնք յետոյ պատահելով միանդաբցի թուրքերի հակակրանքին—Հաջի Ելխանիի դրդումով հարկաւ—այդտեղ էլ կարողացան բոյն շինել ու այսպէս վշտալի և թափառական կեանք են տալիս իրանց թշուառ գոյութիւնը։ Գիւղացիք դիմումներ ու ջանքեր արին զէթ իրանց գիւղում ունեցած տների, պարտէզների ու այգիների արժէքն ստանալու, որ նրանց անհակառակելի իրաւունքն է, բայց անկարելի եղաւ։ Հաջի Ելխանին ոչ միայն անդթաբար տիրապետեց գիւղացոց սեփականութիւնը ամբողջապէս, այլ և հիմքից կործանեց 200 տարի առաջ կառուցված եկեղեցին և տէր դարձաւ ընդարձակ գերեզմանատան, որոնց նոյն իսկ թուրքաց շարիաթով նուիրական են և անձեռնմխելի։

Երկրի թուրք կառավարութիւնը այժ չունի և անգամ Ելխանիի պէս ցեղապետի վրա ոչ մի ազդեցութիւն կարող է ի գործ դնել, գիտենալով որ Հաջի Ելխանին ի պահանջել հարկին կարող է 5—6000 լաւ զինված ձիաւոր հանել։ Վերջերս գիւղացիք դիմեցին Թեմակալի օգնութեանը և իրանց կողմից փոխանորդ կարգերին ռուսահպատակ Միսակ Աւթանդիլեանցին Միանդաբում, այն մտադրութեամբ, որ կարժանանան ռուսաց հիւպատոսի պաշտպանութեանը։

Այժմ, որ եկեղեցու և հանգստարանի քանդման ու տիրապետութեան հարց կայ, բնականաբար ուժգին թափով պէտք է արտայայտվէր Թեմակալ Ներսէս վ. Մելիք-Թանգեան։ Արդարև՝ հանդէս եկաւ Թեմակալը, զեկուցում տուեց Նահանգապետ Շուջա-ուդ-Դօվլէին և մի բողոքագիր ներկայացրեց ռուսաց հիւպատոսին այն արդարացի հիմունքով, որ բոլոր եկեղեցիների պետը Ամենայն Հայոց Հայրապետն է և ինքը Թեմակալը իբրև ներկայացուցիչը Հայրապետի՝ իր սրբազան իրաւունքն է համարում վարել դատը, գնել պահանջները իբրև ռուսահպատակ և ռուսաց պաշտպանութեամբ։

Հայր Թեմակալը գիւղացիների պահանջի հետ քանդված եկեղեցու և հանգստարանի համար պահանջ է դրել 20,000 թումանից աւելի մի գումար։

Գեղեցիկ յոյսեր է փայփայում հայ հասարակութիւնը, որ շնորհիւ ռուսաց կոնսուլի զօրաւոր աջակցութեան՝ Թեմակալ Մելիք-Թանգեանին կաջողվի պաշտպանել ազգի նուիրական իրաւունքը և կեղեքված գիւղացու յափշտակված իրաւունքը։

Ղարադաղի տիրահռչակ խաներից Ղահրաման խանը նախանցեալ տարիների խառնաշփոթ կացութիւնից օգուտ քաղելով գիւղացիներից հաւաքել է հարկերը և չէ յանձնել հարկային վարչութեան։ Կառավարութիւնը բռնութեամբ ժողովեց միևնոյն տարվայ հարկերը. ուրեմն ժողովուրդը երկու անգամ վճարել է նոյն տարվայ հարկերը. հարուածը կրկնակի է եղել գիւղացու գլխին։ Թեմակալը խստիւ բողոքեց, և Սարդար Րաշիդը, որը Ղարադաղի ընդհանուր ղեկավարն ու Ատրպատականի զինուորական հրամանատարն է, յայտնեց հայոց առաջնորդարանին, որ ազդու հրաման է ուղարկել Ղարադաղ, որպէսզի բռնանեն և ուղարկեն Ղահրամ խանին Թաւրիզ։

Հրաման ուղարկվեց նաև Բեարիմ խանին, որ շտապէ Թաւրիզ՝ քէյվանցի հայերի պահանջը կարգադրելու համար։

Ղարադաղում Րահիմ խանի որդին՝ դաշնակցած ընկեր խաների հետ՝ ապստամբութիւն է պատրաստում Շուջա-ուդ-Դօվլէի կառավարութեան դէմ, ոմանց ասելով նոյն իսկ ռուսաց դէմ. երկու օր առաջ 3000 հոգուց բաղկացած ռուսաց մի զօրամաս ուղարկվեց Ղարադաղ ապստամբութիւնը խեղդելու մտքով։

Առաջնորդ Մելիք-Թանգեան 2 օրից վերադառնալու մտադրութեամբ գնաց Դուխարղան, ազգային կալուածների դրութիւնն անձամբ տեսնելու։

Հայկազուն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԸՆԿ. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

—

Կիրակի, մարտի 24-ին, քաղաքային դումայի նիստերի դահլիճում, երեկ. ժամը 7½-ին, տեղի ունեցաւ Հայ Գրողների Ընկ. ընդհ. ժողովի շարունակութիւնը մօտ 40 հոգու ներկայութեամբ։

Որովհետև 1913 թ. նախահաշւի մուտքի յօդուածները արդէն ընդունվել էին (4125 ր.) նախկին ժողովում, այս անգամ ընդունվեցին ելքի յօդուածները աննշան փոփոխութիւններով. օր. գրասենեակի, կանցելարիի համար նշանակված 170 րուբլին ընդհանուր ժողովը դարձրեց 500 ր., գործավարի ռոճիկը 300 րուբլուց՝ 360 ր.։ Մնացորդ գումարը՝ 1533 ր. հաւասարապէս բաժանվելու է երկու մասի, կոչվելով փոխառութեան և Նպաստի կամ օժանդակութեան։

Ապա գաղտնի քուէարկութեամբ, համաձայն քուէարկվողների վաղօրօք յայտնած ցանկութեան, ընդհ. ժողովը Ընկ. անդամներ ընտրեց ճարտարապետ Թ. Թորամանեանին, Ա. Վարդանեանին, Մ. Մատէնճեանին, Գ. Տէր-Բաղդասարեանին, Գ. Ենիգիթարեանին և Տ. Տէրունեանին։

Օրակարգի երրորդ խնդիրը ընթացիկ հարցերի անուան տակ այն բանակռիւն եղաւ, որ վերջերս տեղի ունեցաւ «Հորիզոն» թերթում Արասխանեանի գրադարանի հարցի առիթով մի կողմից Հայ Գրողների Ընկ. վարչութեան նախագահ Յ. Թումանեանի և միւս կողմից նոյն վարչութեան անդամ Ն. Լալայեանի միջև։

Ա. Երզնկեան, յիշեցնելով անցանկալի տպաւորութիւն գործող այդ բանակռուի մասին, խնդրում է պարզել գործի էութիւնը։

Յ. Թումանեան մանրամասն բացատրութիւն է տալիս, մատնանշելով որ երբ Հայ Գրողների Ընկ. նախաձեռնութեամբ թաղվեց հրապարակախօս Աւ. Արասխանեան, հանգուցեալի ազգական Մ. Բունիաթեանը, որ և հոգաց թաղման բոլոր ծախքերը, Մօսկվայից Թիֆլիս եկած ժամանակ իր շնորհակալութիւնը յայտնելով հանդերձ պատրաստակամութիւն արտայայտեց իրան Թումանեանին՝ հանգուցեալի գրքերը Հայ Գրողների Ընկերութեանը ի պահ յանձնելու մասին, իսկ հանգուցեալի ձեռագրերը բերվելով Ախալքալաքից գտնվում էին մինչ այդ իր՝ Թումանեանի մօտ։

Վերջինս Բունիաթեանի այդ կամքի մասին զեկուցեց վարչութեան նիստում, ուր և ներկայ էր Ն. Լալայեան։ Սա հետևեալ օրն իսկ գնում է Բունիաթեանի մօտ և համոզելով նրան, թէ Արասխանեանի գրքերը զուտ ազգագրական բնաւորութեան են, և, բացի դրանից, ըստ Թումանեանի ասածների, ստուեր ձգելով Հայ Գրող. Ընկ. վրայ, կարողանում է ստանալ Արասխանեանի գրադարանը Հայոց Ազգագրական Ընկ. համար։ Որակելով Լալայեանի այդ վարմունքը՝ իբրև միևնոյն վարչութեան անդամի՝ տգեղ ու ներհակ Հայ Գրողների Ընկ. շահերին, Թումանեան պահանջում է ընդհանուր ժողովից իր վերաբերմունքը յայտնել խիստ ու որոշակի կերպով։

Ն. Լալայեան ասում է, որ հանգուցեալ Արասխանեանին թաղման օրը նրա դագաղի արկղը բոլորի ցանկութեամբ ուղարկվեց Ազգ. Ընկ. գրասենեակը հանգուցեալի իրերը պահելու համար, որի նկատմամբ իր համաձայնութիւնը յայտնեց նաև Հայ Գրողների Ընկ. վարչութեան գանձապահ բժ. Զարգարեան։ Նկատելով որ Ազգ. Ընկ. մէջ պահվում են նաև ուրիշ գործիչների գրադարանները, Լալայեան ասում է, որ Հայ Գրողների Ընկ. վարչութեան նիստում, հակառակ Թումանեանի յայտարարութեան, Արասխանեանի գրադարանի մասին խօսք չէ եղել։ Այնուհետև, Լալայեան ժողով է գումարում զօկերից Արասխանեանի յիշատակը յաւերժացնելու հարցի քննութեան համար, և այդ ժողովում համաձայն Բունիաթեանի կտակակատար Աւ. Զարգարեանի առաջարկութեան, որոշվեց Արասխանեանի գրադարանը պահել Հայոց Ազգագրական Ընկերութեան մէջ։ Զարգարեանը տեսնվելով Բունիաթեանի հետ, որին այդ նոյն նոյն խնդրով դիմել էին թէ Հայ Գրողների Ընկ. վարչութիւնը և թէ Ներսիսեան դպրոցը, առնում է նրա համաձայնութիւնը ևս։ Բունիաթեանը յանձնում է գրադարանը Ազգ. Ընկերութեանը պահելու զօկական բաժանմունքում մինչև հանգ. Արասխանեանի դստեր չափահաս դառնալը։ Այդ մասին Լալայեան տպեց լրագիրներում։ Նոյն կերպ, Լալայեանի ասելով, Ազգ. Ընկ. ստացել է օր. Հախվերդեանից նաև հանգուցեալ Հախվերդեանի գրքերը։ Վերջում Լալայեան շեշտում է, որ Հայ Գրողների Ընկ. լինելու է բացառապէս փոխադարձ օգնութեան ընկերութիւն, առանց գրադարաններ պահելու կամ հրատարակութիւններ անելու իրաւունքի։ Այդպէս է նա հասկացել ընկ. նպատակը միւսների հետ ընկ. կանոնադրութիւնը մշակելիս ու ընկ. հիմնելու ժամանակ։ Ն. Լալայեան ի միջի այլոց ասաց նաև, որ իր սեփական գրադարանը ևս, մօտ 5000 րուբ. արժեցող, նուիրել է Ազգագրական Ընկերութեանը։

Թումանեան պնդում է, որ գրադարանի մասին խօսք եղել է վարչութեան մէջ, կայ արձանագրութիւն, որի ստորագրութիւնը Լալայեանը նոյնիսկ ժխտում է, ասելով իբր նա ներկայ չէ գտնվել վարչութեան այդ նիստին։ Փաստը այն է, որ Լալայեան իբրև վարչութեան անդամ հակառակ է վարվել Ընկ. շահերին և վարկաբեկելով ընկերութիւնը՝ ստացել է գրադարանը, ինչպէս և Հախվերդեանի գրքերը, որովհետև օր. Հախվերդեանը անձամբ Թումանեանին համաձայնութիւն է յայտնած եղել, որ հանգուցեալ Հախվերդեանի գրքերը ստանայ Հայ Գրողների Ընկերութիւնը։ Ապա Թումանեան մատնանշում է, որ Լալայեան, որ համարվում է ընկ. հիմնադիրներից մինը, վարչութեան անդամ է, բայց անգիտանում է Ընկ. կանոնադրութիւնը, որ թոյլ է տալիս ունենալ սեփական մատենադարաններ, հրատարակութեան իրաւունք և այլն։ «Ինչպէս պէտք է հանդուրժել էս տեսակ մարդուն,—շարունակում է Թումանեան,—որ ասում է, թէ նա ինչպէս պէտք է բանայ իր ծրագիրները վարչութեան նիստում, որ հերքում է եղած փաստերը։ Հայ Գրողների Ընկ. նման մի պատկառելի Ընկ. մէջ անթոյլատրելի են այդ տեսակ հակասութիւնները»։ Ընդգծելով որ խնդիրը շատ փափուկ է և սոսկ բարոյական բնաւորութեան և ոչ նիւթական, Թումանեան պահանջում է դարձեալ ժողովի կտրուկ վերաբերմունքը, այլապէս վարչութիւնը կը հրաժարվի։

Լալայեան կրկին պնդում է, որ Հայ

Գրողների Ընկերութիւնը պէտք է լինի լոկ նիւթական օգնութեան բնոյթ կրող ընկերութիւն. ասում է, որ նա միշտ գործել է գաղափարական որոշ ուղղութեամբ, պէտք է աշխատանքի բաժանում լինի, իրան յանցաւոր չէ զգում և այլն։

Խնդիրը, լինելով ծանրակշիռ, յարուցանում է թէր ու դէմ կրակոտ ընդդիմախօսութիւններ։

Ժողովականներից ոմանք գտնում են, որ խնդիրը չը պէտք է քննվի ներկայ ժողովում և որ ցանկալի է նրա լուսաբանութիւնը կատարել յատուկ ընտրված մասնաժողովի մէջ։ Ոմանք, ընդհակառակն, սկզբունքային տեսակէտից Լալայեանի վարմունքը համարում են պարսաւելի։ Իսկ միջին ճանապարհ որոնողները մատնանշում են Լալայեանի ամբողջովին ազգագրութեան գաղափարին նուիրված լինելը, նրա չնչով ապրելը, հետևաբար և ժողովը իր վերաբերմունքը կատարված իրողութեանը արտայայտելու է միայն բարեացակամ զգացմունքով, սուր կերպարանք չը տալով միջադէպին։

Վերջ ի վերջոյ խնդրին վերջ տալու նըկատումով բանաձևեր են առաջարկում Ս. Յարութիւնեան, Ս. Եսայեան և Ն. Աղբալեան։

Ժողովը համաձայնում է վերջիններիս բանաձևին հետևեալ ձևակերպութեամբ. «Ընդհանուր ժողովը ցաւ է յայտնում Ե. Լալայեանի դէպի ընկերութեան շահերը ցոյց տուած անկօրէկտ ու անհարազատ վերաբերմունքի համար և, հաւանութիւն տալով վարչութեան մինչայժմեան գործունէութեանը, անցնում է հերթական գործերին»։

Եր. Լալայեան, յուզված, խորին ցաւակցութիւն է յայտնում, որ Ընկ. ներկայ վարչութիւնը սպանեց գրական ֆոնդը։

Նախագահը առարկում է, թէ վարչութիւնը, ինչպէս ինքը յոյս ունի, կը պահէ ֆոնդը և կը զարգացնէ այն։

Ժողովը փակվեց ժ. $11^1/_2$-ին։

Ժողովին նախագահում էր սկզբում ընտրված Ն. Աղբալեան, իսկ քարտուղար այդ օրը ընտրվեց Ս. Եսայեան։ Ե.

ԴԷՊԻ ՀԵՌԱՒՈՐ ԱՄԵՐԻԿԱ

Արդէն կասկածից դուրս է, որ ներկայումս մեր հայ գիւղական ազգաբնակութիւնը, շատ չնչին բացառութեամբ, տառապում է դառն աղքատութեան մէջ, օր աւուր նրա ապրելու պայմանները դառնում են դաժան։

Հայ շինականը միանգամայն անզօր է գտնվում կռւելու «աղքատութիւն» կոչված այդ չարիքի դէմ, որը իր ամբողջ ծանրութեամբ քայքայում է նրան ամեն կերպ։

Ժամանակի բազմապիսի կարիքների ծանրութեան տակ ուժասպառ եղած հայ շինականը կորցրել է և անընդունակ դարձել կռւելու կեանքի գոյութեան ասպարիզում։ Այժմ նրա դրութիւնը շատ երերուն է, վիճակը աննախանձելի, կեանքը դառնութիւնով լի։ Հողի սակաւութիւնը, տգիտութիւնը, ներկայ ժամանակին համապատասխան երկրագործութիւն չը գիտենալը և այլ նման հանգամանքներ միացած ի միասին՝ հալ ու մաշ են արել հայ երկրագործ ժողովրդին և հասցրել նրան վերջին ծայր աղքատութեան։ Առաջվայ շէն ու փարթամ հայկական գիւղերի փոխարէն՝ այժմ կան աղքատացած գիւղեր, իրանց կարօտեալ և խեղճ ազգաբնակութեամբ։ Այդ բոլոր թշուառութեանց հանդէպ՝ գիւղացին ոչ մի ուրիշ փրկարար միջոց չէ գտել. նա միմիայն մի բանից է սպասել իր կեանքի փրկութիւնը. այդ այն է, թէ կը գան առատ տարիներ, բոլոր բերքը առատ կը լինի, և այն ժամանակ նա կը բարւոքէ իր խախտված դրութիւնը։ Տարաբաղդաբար նրա այդ բաղձանքն էլ չէ իրականացնել. եթէ մի տարի առատութիւն է լինում, երկու կամ երեք տարի միմեանց ետևից չէ լինում, առատ տարվայ վերանորոգած տնտեսութիւնը ձախորդ տարիները գլխի-քանդում են ու խեղճ գիւղականին էլի թողնում նոյն թշուառը։ Ինչպէս ասում են, «էլի էն ջուրը, էլի էն ջրաղացը»։

Հայ շինականի կեանքով հետաքրքրվող և նրան բաղդաւորութիւն ցանկացող անհատները զանազան ժամանակ շատ են նկարագրել այդ ժողովրդի դառն ցաւերը, ողբալի վիճակը և միշտ էլ եկել են այն եզրակացութեան, որ ամենից առաջ գիւղացուն հարկաւոր է ուսում, կրթութիւն՝ այդ կացութիւնից դուրս գալու համար։ Նա կարող է հասկանալ իր ապերջանկութեան բուն պատճառը միայն այն ժամանակ, ասում են նրա բարեկամները, երբ կը լուսաւորվի նրա խաւար միտքը գիտութեան կենսատու լուսով։ Այս պարզ ճշմարտութիւնը ոչ ոք չէ կարող ուրանալ։ Եթէ մի անհատ կամ մի ժողովուրդ զինված լինի իր ժամանակի գիտութեան զէնքով, անշուշտ նա բարեփոխութիւն կը մտցնի իր տնտեսութեան մէջ և հեշտութեամբ կը կարողանայ գտնել մարդավայել ապրելու ուղիղ ճանապարհը։

Այդ այդպէս է, բայց ցաւօք սրտի պիտի խոստովանել, որ մինչև օրս յիշեալ անձանց տուած բարի խորհուրդները գիւղացիութեան համար մնացել են համարեա անհետևանք, ոչ մի դրական արդիւնք չեն տուել։ Դրա պարզ ապացոյցն է նոյն ժողովրդի ներկայ աննախանձելի և ծանր վիճակը։

Ապրուստի անհրաժեշտ կարիքից ստիպված, Շիրակի և Փամբակի գիւղերի երիտասարդները այս երրորդ տարին է, որ խումբ-խումբ գնում են Ամերիկա աշխատելու։ Այս տարի գնացողների թիւը աւելի շատացաւ շնորհիւ այն բանի, որ անցեալ տարիների գնացողներից նամակներ են ստացվել, թէ իբր այնտեղ լաւ աշխատանք կայ։ Այս բանը իմանալով՝ գիւղերի աշխատանք որոնող երիտասարդները շտապում են օր առաջ հասնել այնտեղ։ Թէպէտ իւրաքանչիւր գնացողի համար ճանապարհածախսը հարկաւորվում է մօտ 300 ր., այնու ամենայնիւ գիւղացիք սիրտ են անում և ձեռք բերում այդ գումարը կամ իրանց տան ունեցածը ծախելով կամ ուրիշից պարտք անելով ու ճանապարհ ընկնում դէպի Կոլումբոսի գտած՝ ոսկու հայրենիքը։

Թէ որքան օգտակար է դրանց՝ այդ հեռաւոր երկրում, իրանց համար անծանօթ աշխարհում բաղդ որոնելը, ինչ հետևանք կունենայ դրա վերջը, այդ ցոյց կը տայ ապագան։ Միայն մի բան պարզ է, որ եթէ այս կամաւոր գաղթը երկար շարունակվի, այն ժամանակ մեր գիւղերը կը դատարկվեն երիտասարդ, աշխատող ոյժերից։

Յովհ. Համբարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Նոր տանուտէրի ընտրութիւն

Վերին-Ագուլիս, 17 մարտի

Ամսիս 15-ին տեղումս նշանակված էր տանուտէրի նոր ընտրութիւն հաշտարար միջնորդի նախագահութեամբ, շրջանիս 13 հայաբնակ և թուրքաբնակ գիւղերի համար։

Նշանակած օրը վերոյիշեալ 13 գիւղերի ամեն մի ծուխից ներկայ էր մի անդամ. Առ. ժ. 11-ին ժողովականներին ներկայացաւ հաշտարար միջնորդը, շնորհաւորեց մահմեդականների նոր տարին և տօները, բարեմաղթելով ընդհանուր շրջանին առատ բերք, յետոյ մի քանի ազդու խօսքերով բացեց ժողովը։ Նախագահը դիմեց ժողովականներին հարց տալով, թէ ինչպէս են ցանկանում կատարել ընտրութիւնը՝ միաձայն թէ քուէարկութեամբ։ Ժողովականները խնդրեցին, որ ընտրութիւնը լինի միաձայն, առանց քուէարկութեան։

Նախագահը նորից դիմեց ժողովին, հարցնելով թէ ում են ցանկանում ընտրել տանուտէր այդպիսի մի ծանր պաշտօնի համար, նախկինին թէ նոր թեկնածուներ ունեն։ Բոլոր ժողովականները—հայեր և մահմեդականներ—միաձայն յայտնեցին, թէ ցանկանում են դարձեալ նախկին տանուտէրին։ Այսպիսով ամսիս 15-ի ընտրութեանը միաձայն ընտրվեց դարձեալ նախկին տանուտէր Եղիազար Տէր-Մարկոսեանցը, որն ունի ընդհանուր շրջանի մէջ լաւ դիրք։

Չը նայած որ մտել ենք գարուն, բայց մեզանում դեռ շարունակվում են թեթև ցրտերը։

Մեղմ և երկար ձմեռը տեսնելով գիւղացիները մեծ յոյս ունեն, որ այս տարի լինի առատ բերք։

Հմ. Մակարեան

Գիւղական բարքերից

Ղուրա, 21 մարտի

Սէիդլի գիւղից պառաւ Հիւանի Փիր-Ահմէդ-օղլին անցեալներում նշանադրում է իր թոռանը Ալիանի գեղջկուհի Հիւլլմէթ Իւսուֆ-ղըզի հետ, սակայն վերջինս չէ հաւանում իր ապագայ ամուսնուն և հրաժարվում է նրան կին դառնալ։

Հիւլլմէթի եղբայր Ահմէդը, որպէսզի թշնամութիւններ և յանցագործութիւններ չը ծագեն, գնում է մարդկանցով պառաւ տատի՝ Հիւանիի մօտ և վճարում է նրան 80 ր., աղաչելով նրան, որ իր թոռան՝ Բուխսայ Համիդ-օղլիին ամուսնացնէ այլ աղջկայ հետ։ Պառաւը երեսանց ընդունում է նրա առաջարկութիւնը, վերցնում է փողերը, բայց սրտում ոխ է պահում և դիմում է հետևեալ հնարքին։

Վարձելով յանցաւոր մարդկանց՝ նա ուղարկում է նրանց Հիւլլմէթի տան բակի գոմանոցը կրակելու, կարծելով որ հրդեհից Հիւլլմէթը և սրա եղբայրը կը վախենան և կը փախչեն տնից դուրս, իսկ այդ ժամանակ թաքնված յանցագործները նրան կը բռնեն և կը փախցնեն Բուխսայի համար։ Սակայն հրդեհը սկսվելու րոպէից քոյր ու եղբայր գլխի են ընկնում թէ բանը ինչումն է և տնից դուրս չեն գալիս, այլ պատուհանից հարայ-հրոց են բարձրացնում։ Հաւաքվում են գիւղացիները և հանգցնում են հրդեհը, որից առաջացած վնասը հասնում է 500 ր., քանի որ այնտեղ գտնվելիս է եղել դարման, խոտ, գարի, ալիւր ու ցորեն։

Այդ գործը քննիչից անցաւ Բագուի նահանգական դատարանը։ Մ. Ս.

Դաստիարակի վարմունքը

Հաղբուբ, 10 մարտի

Վերջերս տեղիս երկդասեան ծխ. դպրոցում աւագ-ուսուցիչը ժողովի էր հրաւիրել ուսուցիչներին և հոգաբարձուներին, որպէսզի վերջիններս վռնդեն իրանց ընկերներից մէկին, բայց սրանք՝ հիմնվելով իրանց ժողովի վճռի վրա՝ յայտնում են, որ պատճառ չը կայ դիմել այդպիսի կոպիտ միջոցի, մանաւանդ որ տարվայ կէսից աւելին արդէն անցել է։

Հոգաբարձութեան նախագահ հ. Նորայրի այդ խօսքերին որպէս պատասխան՝ աւագ ուսուցիչը ասում է.

— Այդպիսի որոշում մենակ դուք էք կայացրել և ոչ բոլորը։

Հոգաբարձուները միաբերան պնդում են, որ գլխաւորապէս իրանք են համոզել, որ տէրտէրը համաձայնվի իրանց հետ և զուր տեղը չարձակեն ուսուցիչ Ս...ին։ Հ. Նորայրը հասկացնում է աւ. ուսուցչին, որ ինքը թոյլ չի տայ իրան ստել։ Այդ ժամանակ «ուսուցիչներից» մէկը բռունցքները բարձրացրած յարձակվում է տէրտէրի վրա։ Ժողովականներին մի կերպ աջողվում է «ուսուցչին» կարգի բերել...

Թէ ինչ պատճառների համար են գանգատվել հոգաբարձութեանը, որ իրանց «ընկերին» վռնդեն, և հասել են վերջապէս իրանց նպատակին, այդ նկարագրել մեր նպատակից դուրս է։ Միայն այսքանը կասենք, որ պատճառներն էլ, ինչպէս և նպատակը, զզվելի են։

Լ. Ս.

Գ. ԽԱՐՄԱՆԵԱՆՑ ՅՈԲԵԼԵԱՆԸ ՄԵՂՐՈՒՄ

Ուրախալի է, որ մեր գաւառն էլ սկսել է գիտակցել և արժէքաւոր գնահատում տալ իր մտաւոր վաստակաւորին։ Մեղրին էլ հասել է այդ աստիճանին և այսօր մի առանձին ոգևորութեամբ պատրաստվում է կատարելու Գ. Խարմանեանցի ուսուցչական յոբելեանը։

Գ. Խարմանեանը, աւարտելով Ներսիսեան դպրոցը և նիւթական սուղ պայմաններից ստիպված՝ չը կարողանալով շարունակել ուսումը, իրան սրտանց նուիրել է իր գաւառում և գիւղում ուսում, գրագիտութիւն տարածելու գործին։

Ցոյց տալու համար, թէ որքան մեծ և անգնահատելի է Գ. Խարմանեանցի գործունէութիւնը, բաւական է յիշել, որ այժմ Մեղրիում և իր շրջակայ մօտիկ գիւղերում մատաղ սերնդի մօտ եօթանասուն տոկոսը գրագէտ է, և այդ բոլորն էլ համարեա թէ աշակերտել են Խարմանեանցին։

Այս անդուլ աշխատանքն աւելի սքանչացնում է մարդուս, երբ աչքի առաջ ենք ունենում որոշ ժամանակի այն դառն պայմանները, որ մեր ծխական դպրոցները դեռ ևս փակ էին, բայց միևնոյն ժամանակ Խարմանեանցը ամեն ինչ աչքաթող անելով՝ նոյնիսկ խրճիթներում զբաղվում էր մանուկ սերնդի մէջ ուսում ու գրագիտութիւն տարածելու սուրբ գործով։

Գ. Խարմանեանցի գործունէութիւնն իր գաւառում անգնահատելի է, և պէտք է կարծել, որ բոլոր օտար վայրերում գըտնվող մեղրեցիները կը գիտակցեն այդ տօնի վեհութիւնը և ցնծալից սրտով կը դիմաւորեն այդ օրին ասելով՝ «Հազար երանի քեզ, Մեղրի, որ հասել ես այդ փառքին ու օրին. Թող բազմանան քեզանում այդպիսիները»։

Ղ. Խաչատրեանց

ԳԱՐՈՒՆԸ ՈՒՇԱՆՈՒՄ Է

Նոր-Բայազէտ, 16 մարտի

«Մշակի» № 37-ում գրել էի ձմեռվայ սաստկութեան մասին. այժմ շտապում եմ նորից յայտնել, որ ձմեռը աւելի մեծ թափով եկաւ ուշացնելու մեր գարունը, մեր հողագործական և անասնապահական գործունէութիւնը։ Հէնց որ մտանք մարտ ամիսը, շատերը կարծեցին, որ մեզ համար գարուն է բացվելու, բայց դժբաղդաբար մարտի սկզբին երկու օր ու գիշեր շարունակ ձիւն տեղաց և մի արշին խորութեամբ պատեց ամբողջ շրջակայքը։ Սկսեցին ցուրտ և սառնամանիք եղանակներ տիրել, որոնց ազդեցութեամբ տեղի ունեցաւ Սևանի ծովակի սառցակալումը, որ մեծ վնասներ հասցրեց երթևեկող նաւակներին և բեռների փոխադրութեան գործին։

Այժմ մի կողմից ծովակի սառոյցից, միւս կողմից սարերի և դաշտերի աւելի ձիւնակոյտերից սաստիկ ցուրտ եղանակներ են տիրում մեզանում, ուստի ձիւնը հալվում է աստիճանաբար՝ աւելի ևս ուշացնելով գարնան գալը, որը միայն և միայն կեանք կարող է տալ հողագործութեան և անասնապահութեան, որոնք հոկտեմբերից սկսած կաշկանդված են դաժան ձմռան կապանքներում...

Սակայն պէտք է յիշել, որ մեզանում գարունը իսկապէս մեզ համար բերում է մայիս ամիսը, երբ թէ անասնապահութիւնը և թէ հողագործութիւնը ազատ կերպով իրանց գործն են կատարում։ Իսկ այժմ, չը նայած որ արդէն գարնան առաջին ամսումն ենք գտնվում, բայց մեր կողմերում դեռ ևս կարծէք բուն ձմեռն է տիրում. բոլոր անասունները, տաւար և ոչխար, տաք գոմերում պատսպարված՝ պատրաստի խոտ ու դարմանով են կերակրվում, որոնց տէրերը թանգ գներով ստիպված են կեր ձեռք բերել՝ իրանց անասուններին սովից ազատելու մինչև գարնան մտնելը։ Այժմ մեզանում խոտի գինը 7—14 րուբլի է դառել սայլը, իսկ դարմանը՝ 10—20 կ. պուդը։ Դրանք դեռ չափաւոր գներն են համեմատաբար. Բայց ցաւ է յիշել, որ սպասվում է աւելի ևս թանգութիւն, որը աւելի դժնդակ կացութեան մէջ է դնելու ժողովրդին, մանաւանդ չքաւոր դասին, որը ոչ փող ունի իր տաւարի կերը գնելու և ոչ միջոց՝ սերմացու ձեռք բերելու, որի համար նա դիմելու է իր տնտեսութիւնը քայքայող միջոցների։

Այդ տեսակէտից՝ ցաւալի է իսկապէս մեր գաւառի ժողովրդի դրութիւնը... Պէտք է երևակայել, ընթերցող, որ 7—8 ամիս ձմեռվայ տևողութիւնը միանգամայն քայքայում է ժողովրդի տնտեսութիւնը. նա այդ երկարատև ձմեռվայ ընթացքում կաշկանդվելով իր անասունների հետ անգործունէութեան՝ սպառում է իր ամբողջ ունեցածը և դատարկ նստում՝ յոյս դնելով գարնան վրա, որը գուցէ նրա համար մի փոքր ազատ շունչ քաշելու օրեր բերէ։ Բայց, դժբաղդաբար, մեր գարունը ուշանում է և մեր ժողովուրդը մեծ տագնապի մէջ է... Եթէ մի դասակարգ չը կարողանայ իր անասունները խնամել մինչև մայիս կամ թէ չէ անկարող լինի սերմացուն ձեռք բերել, նա, այդ դասակարգը, ստիպված կը լինի կամ անասունը կիսագնով ծախել, կամ հողամասը կիսատ ցանել տալ, որ ի հարկէ արդիւնքի մի քառորդը հազիւ ստանայ, կամ թէ կապալով կը տայ իր հողաբաժինը չնչին գնով աւելի ուժեղներին, հարուստներին, որոնք գայլերի պէս «ամպ օրվայ են սպասում», որպէսզի չնչին վարձով հողեր ձեռք բերեն իրանց խեղճ հարևաններից...

Այնու ամենայնիւ մեր գարունը ուշանում է և մեր ժողովրդի տրամադրութիւնն էլ աւելի այլայլում։ Յուսանք, որ նա գարնան մտնելուց մոռանայ իր բոլոր վիշտը ու ընտանեկան տառապանքները, որ ունեցաւ այս երկարատև ձմռան ընթացքում։

Ս. Ե. Ա.

Յ. Գ.—Այսօր, տեհա, թղթակցութիւնս դեռ չուղարկած՝ հարաւային տաք քամիներ փչելով սկսեցին ձիւները զգալի կերպով հալվել. եթէ այսպէս շարունակվեն տաք եղանակներ, յոյս կայ Զատկի մօտերքը վար ու ցանքսը սկսվի։

Նոյն

ՄԻ ՕՐ ԶԱՐԽԱՋՈՒՄ

Դիլիջան, 10 մարտի

Գաւառական ուսուցիչն և սանը միևնոյն նեղ ու սահմանափակ միջավայրում աշխատելով՝ անկարող են ցանկալի արդիւնք տալ հասարակութեան, եթէ անմիջական զննութեան և քննութեան չենթարկեն շըրջապատը՝ բնութեան և հասարակական կեանքի երևոյթները։ Յաճախ սանն աւարտում է դպրոցն առանց բնութիւնը զննութեան նիւթ դարձնելու, ուսումնասիրելու նրա երևոյթները, որոնց մասին անգիր արածը վաղանցիկ մոռացվում է։ Շատ են և այնպիսի ուսուցիչներ, որոնք բաղդի բերումից տարագիր՝ անծանօթ որևէ միջավայրի հասարակութեան բնակենսական պայմանների հետ՝ կրթում են մատաղ սերունդը առանց կարողանալու շաղկապել շրջապատող կեանքի հետ։ Որքան հին և որքան ցաւն է այս երևոյթը մեր իրականութեան մէջ. «Հայրենագիտութիւն» պատասխանատու առարկան աւանդող ուսուցիչ ենք տեսել, որ անտեղեակ շրջապատին՝ հայկական եօլա տանելու քաղաքացիական իրաւունք վայելող միջոցով է վարել իր դասերը։

Այդ տեսակէտից անպայտ խրախուսանքի են արժանի տեղիս ծխ. դպրոցի դասատուները, որոնք յաճախակի կազմակերպում են էքսկուրսիաներ մեր բնագաւառում։

Այս անգամ, ամսիս 9-ին, IV, V բ. բ. սան-սանուհիները երեք դասատուների առաջնորդութեամբ այցելեցին մօտակայ Զարխաչ գիւղը՝ դիտելու կրաձորերն ու ձիթհանքը և ծանօթանալու իրանց հարևան գիւղի նիստ ու կացին։ Միօրեայ էքսկուրսիան դրոշմեց իր անջնջելի կնիքը սաների մտաւոր զարգացման, շաղկապեց կեանքի հետ։

Զարխաչի կրաձորերը մեծ նշանակութիւն ունեն մեր շրջանում, բայց ափսոս որ ամեն ինչ կատարվում է նախնական միջոցներով։ Կօօպերատիվ մի ընկերութիւն մեծ գործ կատարած կը լինէր և զարկ տուած տնտեսութեան այդ ճիւղի արդիւնաւէտ շահագործման։

Դպրոցը շատ աղքատիկ էր, թէև 250 տուն գիւղը ինքնօգնութեան վեհ սկզբունքն իրագործելով կարող էր բարեկարգ վիճակ ստեղծել։

Գիւղում մի քանի մարդիկ (թէև վարժուհին բացառութիւն էր կազմում) ստանում են «Մշակ» և «Հորիզոն», որ ուրախալի է։ Պէտք է նկատել, որ վերջերս թերթը գիւղում կենսական պահանջ է դառնում։

Սակայն ցաւալի էր տեսնել այդ գիւղում մի քանի գինետներ, որոնք այնպէս արագ աճում են խաբելու դպրոցներին տեղերը մեր կուլտուրապէս յետամնաց շրջանում։

Avsir

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը՝ իր նախագահի ստորագրութեամբ՝ Կովկասի փոխարքային նրա օֆիցէրական ծառայութեան 55-ամեակի առիթով ուղարկել է հետևեալ հեռագիրը. «Կ. Հ. Բ. Ընկերութիւնը առանձին ուրախութեամբ անկեղծ շնորհաւորում է Ձերդ Պայծառափայլութեան օֆիցէրական աստիճանի 55-ամեայ ծառայութիւնը լրանալու առիթով և ջերմագին աղօթում է Բարձրեալին՝ առաքելու ձեզ շուտափոյթ առողջութիւն։ Թող երկարի շատ տարիներ ձեր մարդասիրական և իմաստուն ծառայութիւնը ձեզ սիրող և ձեզանից սիրված Կովկասի համար»։

◆ Երէկ, երկուշաբթի, մարտի 25-ին, առաւօտեան ժամը $11^1/_2$-ից մինչև ժամը 3-ը քաղաքային 37 ձայնաւորների և մամուլի 11 ներկայացուցիչների մասնակցութեամբ տեղի ունեցաւ այցը նոր շինվող սպանդանոցին։ Քաղաքագլուխ Ալ. Խատիսեան տալիս էր այցելուներին մանրամասն տեղեկութիւններ սպանդանոցի շինութեան և տեխնիկական յարմարութիւնների մասին։ Այցը թողեց նպաստաւոր տպաւորութիւն։ Աւելի մանրամասն կը խօսենք առանձին։

◆ Այսօր Թիֆլիսի քաղաքային դումայի նիստում զեկուցվելու է սպանդանոցի կառուցման գործի քննութեան մասին։ Բացատրութիւններ է տալու նաև ձայնաւոր Սուլթանբէրիձէն։ Նիստը խոստանում է լինել հետաքրքրական։

◆ Հայ Գրողների Ընկ. առաջիկայ հերթական երեկոյթին, մարտի 28-ին, Ընկեր. փոխ-նախագահ Տ. Յովհաննիսեան բանախօսութիւն կանի կանանց հարցի մասին։

◆ Պաշտօնական գործերով Թիֆլիս է եկել Բագուի նահանգապետ Ալլիչէվսկին։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը առաջարկեց թաղական պրիստաւներին ուժեղացնել հսկողութիւնը կանանց չարաբաստիկ գըլխարկների ասեղների մասին հրատարակված պարտադիր որոշման ճշգրիտ կատարման վրա։

◆ Մեծ Պասի վերջին շաբաթին Թիֆլիս են գալու դասախօսութիւններ կարդալու համար՝ Պետական Դումայի անդամ Միլիւկօվ և երրորդ Դումայի նախկին պատգամաւոր Գեգեչկօրի։

◆ Քարհատ գիւղի ծխ. դպրոցի հոգաբարձութիւնը իր շնորհակալութիւնն է յայտնում «Մշակին» համակրող աստրախանցի այն մի խումբ անձերին, որոնք ներկայ տարվայ ընթացքում մի օրինակ «Մշակ» են նուիրել յիշեալ չքաւոր հաստատութեանը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ. ԱՐ.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Օպերա

Բաթում, 20 մարտի

Չորեքշաբթի օրը, ամսիս 13-ին, Թիֆլիսի Արքունական թատրոնի օպերային խումբը տուեց իր չորրորդ ներկայացումը. Խաղացին «Կարմենը»։

Կարմենի դերում հանդէս եկաւ Ե. Գ. Կօվլեկօվան և իր աշխոյժ ու ազատ խաղով մեծ բաւականութիւն պատճառեց հասարակութեան. հրաշալի էր ցածր նօտաներում երգած ժամանակ իր կօնտրալտօ ձայնով։ Դօն-Խօզէի դերում հանդէս եկաւ Լազարեվը. շատ ուժեղ տպաւորութիւն թողեց վերջին գործողութեան մէջ։ Օրդան (բարիտօն) բաւականին աջող երգեց Տօրէադօրի պարտիան, միայն բեմի ետևից երգած ժամանակ ձայնը կորչում էր, կարծես թէ շատ խուլ տեղից էր լսվում։ Այդ, ի հարկէ, պէտք է վերագրել բեմի տեխնիկական անյարմարութիւններին։ Շատ գեղեցիկ անցաւ, վերջին գործողութեան մէջ, տ. Կօվլեկօվայի և պ. Օրդայի դուէտը։

Հինգշաբթի օրը, ամսիս 14-ին, խումբը տուեց իր 5-րդ ներկայացումը. խաղացին «Լակմէն»։ Թատրօնը դարձեալ ծայրէ ի ծայր լիքն էր։ Լակմէի դերում հանդէս եկաւ տ. Սարանչեվան, որը իր սրահնչիւն ձայնով այնքան նուրբ երգեց, որ ձայնի ելևէջները բոլորովին չէր կարելի զանազանել մուզիկայից։ Մանաւանդ ուժեղ տպաւորութիւն գործեց, երրորդ գործողութեան մէջ, վերջին —մահից առաջ տեղի ունեցող—մեղեդին։ Լակմէի դերում տ. Սարանչեվան աննման էր։ Նիլականտայի դերը կատարեց պ. Օրդան, իսկ Հերալդի դերը՝ պ. Լազարեվը։ Ինչպէս միշտ, այս անգամ էլ շնորհալի դերասանները փայլուն կերպով կատարեցին իրանց դերերը։

Ուրբաթ օրը, ամսիս 15-ին, խումբը տուեց իր վերջին՝ հրաժեշտի ներկայացումը. խաղացին՝ մինչև օրս մեզ անյայտ մնացած պատճառով, մեր սպասած «Եւգենի Օնէգինի» տեղ «Պայեացին» և «Սեվիլյակի ցիրուլնիկը»։ Տիկ. Սարանչեվայի բենեֆիսն էր. թատրօնը դարձեալ ծայրէ ի ծայր լիքն էր։ Օրդան դարձեալ շատ աջող երգեց «Պայեացիի» прологъ-ը։ «Պայեացիի» մէջ Լազարեվը շատ աջող կերպով կատարեց իր դերը, մանաւանդ ուժեղ էր երկրորդ գործողութեան մէջ. այդ դերը Լազարեվի կատարած դերերի ամենայաջողներից մէկը կարելի է համարել։ Հասարակութիւնը արտայայտեց իր զգացմունքը երկարատև ծափահարութիւններով։ «Սեվիլյակի ցիրուլնիկի» մէջ Ռօզինայի դերում հանդէս եկաւ բենեֆիցիանտուհի Սարանչեվան, որին հասարակութիւնը ընդունեց երկարատև ծափահարութիւններով։ Տիկ. Սարանչեվան Ռօզինայի դերը սքանչելի կերպով տարաւ մինչև վերջ։ Ներկայացումից յետոյ տիկ.

Սարանճեւյան հասարակութիւնից մատուցին երկու ծաղկեայ պսակ, մի քանի անգամ բեմ հրաւիրվեց երկարատե ծափահարութիւնների տակ։ Տասիոյի դերը Օրգան կատարեց շատ աջող. բաւական լաւ էին իրանց դերերում տիկ. Ռոստովսկայան՝ Բեյայի, իսկ Լիւբչենկօն՝ Ցեգաբոյի։

Ընդհանրապէս կարելի է ասել, որ Բաթումի հասարակութիւնը, ի նկատի ունենալով քաղաքիս այժմեան ընկած դրութիւնը, շատ լաւ, սպասածից աւելի, գնահատեց իր հիւրերին։

Բոլոր ներկայացումներին թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր։ Ա. Նիկողոսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 23 մարտի

Կ. Պօլսում Թէոդիկի խմբագրութեամբ լոյս տեսած 1913 թ. համար «Ամենուն տարեցոյցը» անունով շքեղ և օրինակելի հրատարակութեան մէջ տպագրված է մի աչքի ընկնող պատմական և ժամանակագրական սխալ՝ մեր անմահ աշուղ բանաստեղծ Սայաթ-Նովայի մասին։

Այդպիսի յայտնի աշխատութիւնների մէջ ներելի չէ որ նշանաւոր սխալներ սպրդեն։ Եւ որպէսզի ապագայում ժամանակագրական սխալներ տեղի չունենան, ու գործող անձանց վերաբերութեամբ կասկածի կամ թիւրիմացութեան տեղիք չը տրվի, ես պարտք եմ համարում շտապել ուղղել այդ սխալը, որը հետևեալն է։

Յիշեալ օրինակելի հրատարակութեան 115-րդ, 116-րդ, 117-րդ, 118 րդ, 119-րդ երեսներում տպված է պ. Ատրուշանի մի երկար յօդուածը, անմահ Սայաթ-Նովա աշուղի մասին, որտեղ տեղ-տեղ մէջ են բերված և նրա երգերից հատուածներ։ Իսկ 116 րդ երեսում զետեղված է մի զինւորական համազգեստով և ռուսական կարտուզ գլխարկով մի անձնաւորութեան պատկեր, որի տէրը Կ. Պօլսում անուանել է իրան աշուղ Սայաթ-Նովա։

Այդ պատկերի տակ Թէոդիկը զետեղել է հետևեալը։ «Աշուղ Սայաթ-Նովա, որ Կ. Պօլիս այցելելուն (1870 թ.) լուսանկարուած է Աբդուլլահ եղբարց լուսանկարչատանը»։ Բացի այդ՝ 115 րդ երեսում տպված է. «Հայկական լուսանկարիչ Գէորգ էֆ. Աբդուլլահ օրին մէկը գուրգուրանքով ինծի կը յանձնէ իր լուսանկարած մէկ կենդանագիրը, որ կը ներկայացնէր Սայաթ-Նովան. հազուագիւտ նուէր մըն էր այն ինծի համար. շատ անգամ առիթն ունեցած էի այդ զգայուն աշուղին մասին գրելու, պարբերական թերթերու մէջ, բայց բնաւ չէի գուշակեր, որ նոյն աշուղն ունեցած ըլլայ նաև իր լուսանկարը։ Այդ ուրախութիւնս յաւերժացնելու համար զայն յանձնեցի. Թէոդիկի «Տարեցոյցի անմահական էջերուն։ Ռուսահայ բժշկապետ Ախվերդեանը նոյն աշուղին ամբողջական երգերը կը հրատարակէր, սակայն առանց պատկերի։ Մեր գրական աշխարհին ամենէն ծանօթ աշուղն է Սայաթ-Նովա» և այլն։

Դեռ ես թէ մանկութեանս ժամանակից ծանօթ լինելով Սայաթ-Նովայի, թոռների և Ներսիսեան դպրոցում աշակերտական նստարանին կից նրա թոռներից լսած եմ, որ, ըստ աւանդութեան, Սայաթ-Նովան Աբենելքում շատ է ճանապարհորդել —Պարսկաստան, Հնդկաստան, Թիւրքիա և Արաբիա—սակայն երբէք 1870 թւականին, որովհետև արդէն շատ պարզ յայտնի է, որ անմահ բանաստեղծ աշուղի ողբերգական մահը տեղի է ունեցել դեռ ևս 1870 թւականից 75 տարի առաջ, Աղա-Մահմադ-խանի Թիֆլիսի աւերման ժամանակ՝ 1795 թ. սեպտեմբերի 10—13-ին։ Հետևապէս՝ յիշեալ պատկերը ոչ թէ Ախվերդեանի գրած Սայաթ-Նովայինն է, այլ մի որևէ, գուցէ Սայաթնեանց ազգանունով խաբեբայի—ինքնակոչ Սայաթ-Նովայի։

Այս նամակովս մէջ բերելով այս պատմական սխալի ուղղումը, յոյսով ենք, որ շնորհալի Թէոդիկն եւ կը բարեհաճի նուաստիս ակնարկին ուշադրութիւն դարձնել և հարկ եղած ուղղումը զետեղել առաջիկայ 1914 թ. իր պատուական և օրինակելի աշխատասիրութեան՝ «Ամենուն տարեցոյցի» մէջ։ Մակ. Ձմշկեան

—

Թաւրիզ, 16 մարտի

Խորասանի Նիշաբուր քաղաքում պ. Բաղդասար Խալաֆեանը հանգանակել է յօգուտ մեր խնամքին յանձնված դպրոցների 700 ղրան։

Վերոյիշեալ գումարը հոգաբարձութիւնս ստացաւ և յայտնում է իր խորին շնորհակալութիւնները ինչպէս նահանգապետին նոյնպէս և նուիրատուներին։

Հայկազեան-Թամարեան երկսեռ դպրոցի հոգաբարձութեան

Նախագահ՝ Մ. Սահակեան
Քարտուղար՝ Աւ. Մ. Վարդանեան

—

Տաշքենդ, 28 փետրվարի

Արդէն երկու տարի է, որ Գողթան գաւառի Մեսրոպաւան գիւղում բացվել է ծխ. երկսեռ դպրոց և այդ դպրոցի ծախքը հոգում է այդ գիւղից գաղթած և տարաբնակ երիտասարդութիւնը։

Այստեղ՝ իմ նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ նուիրատւութիւն յօգուտ յիշեալ դպրոցի։ Նուիրատուներն են՝ Ե. Ոսկանեան, Ա. Ոսկանեան, Կ. Օհանջանեան՝ 25-ական ր., Ս. Ոսկանեան 20 ր., Հ. Ոսկանեան, Ա. Կարապետեան, Ե. Մկրտչեան՝ 15-ական ր., Մ. Ոսկանեան, Գ. Մկրտչեան՝ 5-ական ր., ընդամենը 150 ր.։

Այդ գումարն անցեալ տարի փոխադրվեց յիշեալ դպրոցի հոգաբարձութեանը։

Բացի յիշեալ հանգանակութիւնից՝ վերջերս Ջիլիկի կայարանում հանգանակվեց նոյնպէս իմ միջոցով հետևեալ նուիրատւութիւնը.

Ս. Ղազարբէկեան, Ջ. Օհանջանեան, Գ. Սարգսեան, Գ. Շակայեան 3 ական ր., Ա. Յարութիւնեան, Ն. Խաչատրեան, Գ. Բաղդասարեան, Ե. Իշխանեան, Մ. Ստեփանեան, Ս. Օկանեան, Ն. Ղահրամեան, Ջ. Պետրոսեան, Մ. Մուսայէլեան, Լ. Տունեան 2-ական ր., Գ. Ամալեան, Գ. Տէր-Յարութիւնեան 1 ր. 50-ական, Ե. Բէկլարեան, Մ. Յարութիւնեան, Ա. Պօղոսեան, Ս. Օկանեան, Մ. Ոսկանեան, Ա. Գաբրիէլեան, Ս. Դաւթեան 1-ական ր., ոմն, Խաչատուր 50 կ.։ Գումարը՝ 78 ր. 50 կոպ.։

Այս վերջին գումարը նոյնպէս փոխադրեցի հոգաբարձութեան։

Արդ սրանով յայտնում եմ խորին շնորհակալութիւնս բոլոր նուիրատուներին։

Սոյն գրութիւնովս դիմում եմ և կոչ եմ անում բագուաբնակ կամ ուրիշ քաղաքներում եղող մեր համագիւղացիներին, որպէսզի նրանք էլ հետևեն վերոյիշեալ բարի օրինակին։ Չէ որ մեր համագիւղացիների—ուր էլ լինեն նրանք—սուրբ պարտականութիւնը պիտի լինի կանգուն պահել մեր հայրենի գիւղի միակ լուսատու դպրոցը։

Համբարձում Ոսկանեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ «Рус. Слово»-ին հեռագրում են Թէհրանից. «Կառավարութեան արձակած հայ կամաւորների և մուջահիդների մեծ մասը մեկնում է Թիւրքահայաստան, ուր, լուրերի համաձայն, պատրաստվում է ապստամբութիւն։ Այստեղ գտնվող հայ յեղափոխականների պարագլուխները յայտնում են, որ եթէ հաշտութիւն կնքելու դէպքում Թիւրքիան հրաժարվի բարենորոգումներ մտցնել Թիւրքահայաստանում, այն ժամանակ ապստամբութիւնը անխուսափելի է։ Ապստամբութեան նպատակն է լինելու հարկադրել մեծ պետութիւններին, գլխաւորապէս Ռուսաստանին, միջամտել»։

✦ Մոսկվա է գնացել Ներսէս արքեպիսկոպոսը՝ մասնակցելու այն մասնաժողովի մէջ, որ պաշտօն ունի հանգանակութիւն անել հայ դպրոցական ֆօնդի համար։

✦ Այն 14 դաշնակցականների գործի առիթով, որոնց դատը առանձնացվեց, սենատը հարցրեց Թիֆլիսի դատաստանական պալատին, թէ ինչու դատարանի կազմում կար ոչ թէ ընտրովի, այլ նշանակովի տանուտէր։

✦ Արդարադատութեան մինիստրի կարգադրութեամբ քննութիւն է կատարվում Լըժինի խարդախութիւններին գործակից անձանց գործի առիթով, որոնց թւումն են երկու ժանդարմական օֆիցեր։

✦ Կիէվի նացիօնալիստների կլուբը չերնոգորական Նիկոլայ թագաւորին ուղարկեց հետևեալ հեռագիրը. «Կիէվի ռուս նացիօնալիստների կլուբի անդամները բազմամարդ ժողովում խոնարհվում են ձերդ թագաւորական մեծութեան երկաթէ վճռականութեան առաջ ընդդէմ Վիէննայի պահանջների ու Դանիէլ Նեգոշի սերունդների դարաւոր աւանդի ոտնձգութիւնների։ Չերնոգորիայի փայլուն ապագան արժէ այն չերնոգորական կռւին, որին սրտատրոփ հետևում են բոլոր ուղղափառ ռուս մարդիկ։ Ձեզ հետ է պատմութիւնն ու ճշմարտութիւնը»։

✦ Մինիստրների խորհրդի նախագահին, արտաքին գործերի մինիստրին, Պետական Դումայի խորհրդի անդամներից մի քանիսին ուղարկված է հետևեալ հեռագիրը. «Ռուս նացիօնալիստների Կիէվի կլուբը քննելով բազմամարդ ժողովում այն դրութիւնը, որպիսին դրաւել է Ռուսաստանը բալկանեան հարցում, չէ կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ Ռուսաստանը անտարբեր վերաբերմունք է ցոյց տալիս դէպի Չերնոգորիայի և բալկանեան միացած սլաւոնների վիճակը։ Ռուսաստանի կենսական շահերը սլաւոն եղբայրների մեր արիւնով նուաճված երկիրներում հրամայողաբար պահանջում են հէնց այժմ վճռել նեղուցների հարցը, առանց որոնց մեծ Ռուսաստանը մուտք չունի դէպի համաշխարհային շուկան»։

✦ Նոր տեղեկութիւնների համաձայն, Կոկօվցէվը և Սազօնովը կը մնան իրանց պաշտօններում։

✦ Արտաքին գործերի մինիստրի բնակարանում կայացաւ Պետական Դումայի զանազան ֆրակցիաների անդամների խորհրդակցութիւնը արտաքին քաղաքականութեան հարցերի առիթով։ Աջակողմեանների ներկայացուցիչները բացակայում էին։ Նացիօնալիստները և հոկտեմբերեանները յայտնեցին, թէ ռուսական արտաքին քաղաքականութիւնը այնքան էլ վճռական չէ։ Մինիստր Սազօնովը առարկեց, թէ խաղաղութեան շահերը ստիպում են հոգալ բացառապէս միջազգային պայմանների մասին, որոնք կարող են ամեն րոպէում համաեւրոպական պատերազմ ստեղծել։ Յանուն խաղաղութեան՝ ռուսական դիպլոմատիան պնդելու է՝ Սկիւտարը անպայման մտցնել Ալբանիայի կազմի մէջ։ Ընդ սմին ամեն ջանք գործադրվելու է, որպէս զի բուլղար զօրքերը չարշաւեն դէպի Կ. Պօլիս։

✦ Աւստրիական աղբիւրներից մի սենսացիօն տեղեկութիւն են յայտնում, թէ իբր Ռուսաստանը Սան-Ջիօվանի-դի-Մէդուա է ուղարկել չերնոգորցիներին օգնութեան 7 մեծ թնդանօթ, 11 միլիօն փամփուշտ, 4,400 զինւորների վերարկու։

✦ Չերնոգորիայի համար սերբերը ուղարկեցին Սան-Ջիօվանի 6000 զինւոր, 1,200 ձի և 18 պաշարողական թնդանօթ։

✦ Թիւրքաց զօրքերի ընդհանուր հրամանատար Իզզէթ-փաշան հրաժարվեց՝ անկարող լինելով հանդուրժել Չաթալջայի զօրքերի հրամանատարների միջև ծագած տարաձայնութիւններին։

✦ Ալբանիայում պատրաստվում է մեծ ապստամբութիւն։ Սերբերը իրանց զօրքերի կազմը ուժեղացրել են։ Սերբ գիւղացիներին զէնք է բաժանված։

✦ Չաթալջայի ուժեղ թնդանօթաձգութեան ձայնը շարունակ լսվում է Կ. Պօլսից, ուր քրիստոնեայ ազգաբնակութիւնը աւելի է սարսափում։ Տեղական իշխանութիւնները հանգստացնում են ազգաբնակութեանը, ասելով թէ Գերմանիան և Աւստրիան խափանելու են բուլղարների արշաւանքը դէպի Կ. Պօլիս։ Սուլթանի մայրաքաղաքը դատարկվում է։ Լուրերի համաձայն՝ Հիլմի-փաշան համաձայնել է կաբինէտ կազմել։

✦ Պարզվեց, որ Սերբիան և Չերնոգորիան մինչև այժմ գրաւել են Թիւրքական երկրից 62,000 քառ. կիլոմետր, Յունաստանը՝ 30,000, Բուլղարիան՝ 55,000։

✦ Չաթալջայում վճռական ճակատամարտը դեռ չէ վերջացել։

✦ Չերնոգորական մինիստրների խորհուրդը վճռեց շարունակել Սկիւտարի պաշարումը։

✦ Սկիւտարի մօտ դաշնակիցներից ընկած զոհերի թիւը մօտաւոր հաշւով 4000 է։

✦ Ռուսական զինւորական նուէրը Չերնոգորիային Վիէննայի մամուլի, քաղաքական շրջանների և հասարակութեան մէջ առաջ բերեց աննկարագրելի զայրոյթ։ Լրագիրներում տպվում են հակառուսական յօդուածներ, որոնցով պահանջվում է գործադրել ծայրայեղ միջոցներ Ռուսաստանի վերաբերութեամբ։

✦ «Matin»-ը կարծում է, որ աւստրո-չերնոգորական պատերազմի դէպքում ռուսաց հասարակական կարծիքը հազիւ թէ գոհ մնայ Ռուսաստանի չէզոքութիւնից, և ինչ տեսակի էլ որ լինի Սազօնովի և ռուս կառավարութեան խելացիութիւնը, այնու ամենայնիւ նրանք չեն կարող դիմադրել համաժողովրդական ռուսական զգացմունքին։

✦ Գերմանական դիւանագէտների կարծիքով, Աւստրիայի և Ռուսաստանի միջև պատերազմը անխուսափելի է։ Թիւրքաց պաշտօնական «Թանինը» յարձակումներ է գործ դնում Աւստրիայի երկդիմի քաղաքականութեան առիթով։

✦ Պետ. Խորհուրդը շնորհաւորական հեռագիր ուղարկեց դաշնակից պետութիւններին Ադրիանուպօլիսը վերցնելու առիթով։ Թրօյէնսկին բողոքեց, յայտնելով որ արտաքին քաղաքականութեան հարցերը վերաբերում են գերագոյն իրաւասութեանը։

✦ Լուրերի համաձայն՝ Աւստրիան գաղտնի համոզում է Ռումինիային մասնակցել պատերազմին։

✦ Ամբողջ Սերբիայում կազմակերպվում է բօյկոտ աւստրիական ապրանքների դէմ։

✦ Գերմանական շովինիստական մամուլը խորհուրդ է տալիս ամենից առաջ վախեցնել Ռուսաստանին, այն ժամանակ ինքնին Չերնոգորիան անձնատուր կը լինի։

✦ Մարտի 24-ին լրացաւ ռուսաց գրականութեան փայլուն ներկայացուցիչներից մէկի՝ դժբաղդ Վ. Գարշինի մահվան 25-ամեակը։ Ամենուրեք Ռուսաստանում յարգվեց վաղամեռիկ գրողի յիշատակը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

23 մարտի

ՕԴԵՍՍԱ։ Գերմանական «Ստրասբուրգ» գաղութը Րոմանօվների Տան 300-ամեակը յաւերժացնելու համար յատկացրեց 40,000 ր. բարձր տարրական դպրոց բանալու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հարցաքննութիւնների մասնաժողովը 20 ձայնով ընդդէմ 7-ի ընդունեց զինւորա-բժշկական ճեմարանի նոր կանօնադրութիւն հրատարակելու առիթով զինւորական մինիստրին ներկայացված հարցապնդումը։

Հանդէսով տօնվեց ակադեմիկոս Օվսեանիկօ-Կուլիկօվսկիի գրական-գիտական գործունէութեան 35-ամեայ յոբելեանը։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ։ Ձերբակալվեց քաղաքային բանկի գանձապահ Ֆէրսիկօվը, որ վատնել է աւելի քան 100,000 ր.։

24 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փակվեց տնայնագործների համառուսական համագումարը։

Փակվեց համառուսական գիւղատնտեսական պալատի մասնաժողովի խորհրդակցութիւնը։ Պալատը սկզբունքով վճռեց գումարել Մօսկվայում գիւղատնտեսական կօնգրէս և կազմել նրան կից միջազգային ցուցահանդէս։ Վճռվեց արտակարգ միջոցներ ձեռք առնել մսի ճգնաժամի դէմ։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Դատաստանական պալատը Նօբէլ ֆիրմայի դրամատարից 11,000 ր. յափշտակող և Նօբէլ ֆիրմայի կառավարչից 40,000 ր. շորթող աւազակներին դատապարտեց. մէկին 15 տարով, երկուսին 12, երկուսին 10, երեքին 8, մէկին 6 տարով տաժանակիր աշխատանքների։

ՉԸ ՀԱՍՑՎԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

—

24 մարտի

Ալէքսանդրոպոլից—Մինասեանցին, Վերին-Ագուլիսից—Մաղաքօվին, Իրկուտսկից—Աւետիքօվին, Ղաթարի հանքերից-Բէբուչէվային, Վիլնոյից—Նիկողոսեանցին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



ԿԱՏԱՐԵԱԼ ԲԱՐԵՐԱՐ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ է թողնում մազերի վրա Պիկսաֆօնով լուանալը. Նրա միանգամայն օգտակար ազդեցութիւնը ներկայումս խոստովանում են ամենքը։ Այն դիւրութիւնը, որով Պիկսաֆօնը մաքրում է գլխի կաշին թեփից և կեղտից, նրա հարուստ փրփուրը, որը շատ հեշտութեամբ մաքրվում է մազերի վրայից, և նրա խիստ դուրեկան հոտը անհամեմատ հեշտացնում են այդ պրէպարատի գործադրութիւնը։ Պիկսաֆօնի ակներև ներգործութիւնը կայանում է նրանում, որ, շնորհիւ իր մէջ պարունակող ձիւթի, նա դիմադրում է մազերը թափվելուն։

Մի սրուակի գինը 1 ր. 50 կ., որը, իւրաքանչիւր շաբաթ գործածելուց, կը բաւականանայ մի քանի ամիս։

(М. 136289/136296)

Ալէքսանդրոպոլի «Շիրակ» տպարանի համար
ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ
ՄԻ հմուտ ՏՊԱԳՐԻՉ
և ԳՐԱՇԱՐՆԵՐ։
Դիմել՝ Александрополь, Типографія «Ширакъ», իսկ Թիֆլիսում «Խաթաբալայի» խմբագրատանը պ. Ատրպետին։
(ձ.մ.) 240. 3—1

ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ!
Վաճառվում են
Ց. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
1) Ինչպէս մշակել բամբակը, նկարներով. . . . 15 կ.
2) Գործնական ձեռնարկ շերամապահութեան, նկ. . 20 կ.
Դիմել գրավաճառներին։
Պահեստը՝ Елисаветполь! книжная торг. Ст. Жамгарянца.
(Ե.Հ.) 217. 5—3

Գեղեցկութիւնը՝ բարձր կատարելութեան է հասած
№4711 ՎԱՐԴԻ ԲՈՒՐԵՂԵԱՅ ՍԱՊՈՆԸ
երեսի կաշուն և գոյնին տալիս է այն քնքշութիւնը, հարթութիւնը և առաձգականութիւնը, որոնք համարվում են ամենաբարձր գեղեցկութեան իսկական նշանները։ Կտորը 25 կոպ.։ Կայ ամենուրեք։
Ֆերդ. Միւլգենս պարֆիւմէրիա № 4711
Կէօլն Ն-Րէյնի վրա։ Ռիգա։ Հիմնված 1792 թ.։

№ 4711
F. MÜLHENS
PARFUMERIE

(М. 529879/529805) 10—8

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Ջ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՐՇԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Մ. Գ. ԱՐՇԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Մ. Լ. ՌԵՆԻՖԵՐ-ԱՐԵՇԵՎԱ—6—7 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Վճարը 50 կ.։ Ջրաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—35

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ԵՆ
ԱԳԷՆՏՆԵՐ
1000 ռուբլի գրաւականով, ամսական 100 ռուբլի ռոճկով։ Մանրամասնութիւնները կարելի է իմանալ Թիֆլիսում, Միխայլովսկի պր. № 102. Լօլաձէից։
(Ե.) 235. 2—2

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՀԱՄԲԱՒԱԲԵՐ
«Դ-ր Մէլէրի Սոմատոգէնը» ինքս գործ եմ ածել և կարող եմ ասել, որ նա բարերար ազդեցութիւն է անում ստամոքսա-աղիքային գործունէութեան, հետևաբար ընդհանուր ինքնազգացման վրա։ Իմ գործունէութեան ընթացքում ստամոքսային և աղիքային հնացած կատարքեր երկար դէպքի ժամանակ «Սոմատոգէնի» գործադրութիւնից ես ստացայ լաւ հետևանքներ, այն է՝ անհետացան ծանրաբեռնութ սիմպտոմները և այդ օրգանների գործունէութիւնը կանոնաւորվեց։ Մեղկ. դ-ր Ա. Ս. Խ. Վիլնօ։
ԴԵՂԱՉԱՓԸ. Վերցրէք մօտակայ դեղատնից կամ դեղագործատնից «Դ-ր Մէլէրի Սոմատոգէնից» 2 շաբաթ բաւականացող մի արկղիկ և ընդունեք 1—2 թէյի գդալ օրական 3 անգամ, մինչև որ ձեր մարսողութիւնը կը կանոնաւորվի։
(П. 49331)

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմեռային երթեւեկութիւն)

Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արագ գնացքը № 2—10 ժ. 12 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 30 ր., Գանձակ 2 ժ. 55 ր., Եւլախ 4 ժ. 26 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. եր., Բագու 11 ժ. 8 ր. գիշ.։ Պօստաւոր գնացքը № 4—12 ժ. 36 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 3 ժ. 30 ր. գիշ., Գանձակ 6 ժ. 41 ր. առ., Եւլախ 8 ժ. 38 ր. առ., Հաջի-Կաբուլ 1 ժ. 13 ր. ցեր., Բագու 5 ժ. 36 ր. ցեր.։ Մարդատար գնացքը № 6—6 ժ. 31 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 51 ր. եր., Գանձակ 11 ժ. 20 ր. գիշ., Եւլախ 12 ժ. 56 ր. գիշ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 40 ր. գիշ., Բագու 7 ժ. 53 ր. առ.։ Խառն գնացքը № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—5 ժ. 53 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 10 ժ. առ., Գանձակ 2 ժ. 31 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 45 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 6 ժ. 54 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—Մարդատար գնացքը № 11—10 ժ. 8 ր. գիշ., հասնում է Միխայլովօ 1 ժ. 58 ր. գիշ., Բաթում 10 ժ. 21 ր. առ.։ Պօստաւոր գնացքը № 2—9 ժ. 50 ր. առ., հասնում է Միխայլովօ 1 ժ. 55 ր. ցեր., Բաթում 11 ժ. 7 ր. գիշ.։ Մարդատար գնացքը № 5—4 ժամ 38 ր. ցերեկվայ հասնում է Միխայլովօ 8 ժ. 44 ր. եր., Բաթում 5 ժ. 56 ր. գիշ.։ Խառն գնացքը № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 20 ր. գիշ., հասնում է Միխայլովօ 10 ժ. 10 ր. առա., Բաթում 12 ժ. 26 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—Պօստաւոր գնացքը № 4/3—1 ժ. 11 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 30 ր. առ., Ալէքսանդրօպոլ 12 ժ. 7 ր. ցեր., Էջմիածին 5 ժ. 22 ր. ցեր., Ուլուխանլու 5 ժ. 49 ր. ցեր. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 40 ր. գիշ.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 8/79 (միայն II և III կարգի վագոններով)—1 ժ. 6 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 23 ր. եր., Ալէքսանդրօպոլ 12 ժ. գիշ., Էջմիածին 6 ժ. 29 ր. գիշ., Ուլուխանլու 6 ժ. 11 ր. առ., Երևան 5 ժ. 51 ր. առա.։ Մարդատար-ապրանքատար գնացքը № 6/5—8 ժ. 10 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ 7 ժ. 14 ր. առ., Կարս 10 ժ. 48 ր. առ.։

ԲՈՐԺՕՄ.—Մարդատար գնացքը № 95/10—3 ժ. 17 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 57 ր. ցեր., Բորժօմ 9 ժ. 13 ր. եր.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—Արագ գնացքը № 1—9 ժ. 10 ր. եր.։ Պօստաւոր գնացքը № 3—9 ժ. առ.։ Մարդատար գնացքը № 5—3 ժ. 46 ր. ցեր.։ Խառն գնացքը № 107—3 ժ. 8 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—Արագ գնացքը № 12—8 ժ. 50 ր. առ., Պօստաւոր գնացքը № 4—11 ժ. 32 ր. գիշ.։ Մարդատար գնացքը № 6—5 ժ. 15 ր. գիշ.։ Խառն գնացքը № 106—5 ժ. 15 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Պօստաւոր գնացքը № 40/3—8 ժ. առ.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 6K/5—1 ժ. 28 ր. ցեր.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 89/7—5 ժ. 28 ր. ցեր.։

ԲՈՐԺՕՄԻՑ.—Մարդատար գնացքը № 9/10B—11 ժ. 22 ր. առ.։

ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՀԷՔԻԱԹ ՊԱՏՄԵԼ
Գործնական ձեռնարկ ստորին դասարանների կրօնի, հայոց լեզուի ուսուցիչների և ծնողների համար (ութն ժողովրդական հէքիաթ)։ Գինն է 25 կօպ.։
Մշակեց ԱՐՇԱԿ ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆ
Դիմել «Գիր» և «Գուտտենբերգ» գրախանութներին։ Գումարով գնողներին կը լինի զեղչ։ Կազմողի հասցէն՝ Эривань, Армянская Духовная Семинарія.
(օ. մ.) 231. 6—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный